



..ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ..  
ՎՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1984



**ԳՐԻԳՈՐԻԱ  
ՂԹԱՄԱՐՈՒ**





ԳՄԴ 84 Հ 1

Գ 887

Աշխատասիրության՝  
Մ. Թ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ.  
Խմբագիր՝  
Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԵՄՀ ԳՐԱԴԱՐԱՆ  
Библиотека ЕГУ

143299

**Գրիգորիս Աղթամարցի.**

Գ 887 Տաղեր/Աշխատասիրությանը Մ. Թ. Ավդալբեգյանի.—  
Ե.: Սովետ գրող, 1984.— 120 էջ.— («Հայ քնարեր-  
գություն» մատենաշար).

Ժողովածուն ընդգրկում է XVI դարի տաղերգու Գրիգորիս  
Աղթամարցու բանաստեղծական ժառանգությունը:

4702080100 (55)

795 (01) 84

84 «Յ»

ԳՄԴ 84 Հ 1

Ար 1

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, ձևավորման,  
տպաշարման համար, 1984

## ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՅԻ

16-րդ դարի բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցու կենսագրական տվյալները խիստ սուղ են, մեծ մասամբ իր բանաստեղծություններից քաղված: Նա սերում է Արծրունյաց թագավորական տոհմից, Սմբատ թագավորի թոռն է և կաթողիկոսական գավապանի ժառանգական կրողը:

Իհարկե, 16-րդ դարում «թագավորական տուն» և «թագավոր» հորջորջումներն այլևս չեն ունեցել այն նշանակությունը, ինչ առաջներում: Դա ավելի ժողովրդի մեջ հայերի «անկախության» երապանքներին բավարարություն տվող բարոյական միավոր էր, քան՝ պետական-պաշտոնական ուժ:

Դեռևս Գրիգոր Բաբունուն աշակերտելու տարիներին գրված բանաստեղծության մեջ նա նշում էր.

Ի թուականին հայոց ինն հարիւրի  
Վարթուն և հինգ տարի ւ ի նմայ անլի (1516 թ.)  
Ես՝ Գրիգորիս նուստ Աղթամարցի  
Ապիկարս տեսուչ և անհիշելի...

«Տեսուչ» եպիսկոպոս է նշանակում, այդպես էլ անվանվում են եպիսկոպոսները Ներսես Շնորհալու «Թուրթ ընդհանրականում», բայց ըստ հայագետ Ներսես Ալինյանի՝ այդ Գրիգորիս Աղթամարցու համեստ ակնարկն էր իր կաթողիկոս

լինելու մասին: Եվ իրոք, ձեռագրական տվյալները ճշգրտում են նրա կաթողիկոսական գահ բարձրանալու տարեթիվը՝ որ է 1512 թվականը: Այդ փաստը հիշատակվում է նրա բանաստեղծությունների վերնագրերում «Ի Գրիգորիս Աղթամարցի կաթողիկոսէ ասացեալ», «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն և Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ» կամ «Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարոյ ըստ անունն երգողին» և այլն: Երկերի ստեղծման առանձին տարեթվեր են պահպանված բուն ստեղծագործությունների վերջում: Օրինակ՝

Թրիճն հայոց իճն հարիր,  
Երթանասուն և երկու այլ իր (972—551 = 1523):

Բանաստեղծությունների մեջ պահպանված այս թվականներով որոշակի է դառնում Գրիգորիս Աղթամարցու ապրած ժամանակաշրջանը՝ 16-րդ դարի առաջին կես: Նրա կենսագրության վերջին տվյալը վերաբերում է 1544 թվականին, երբ նա դեռևս կաթողիկոս է հիշվում: Թե դրանից հետո քանի՞ տարի է նա ապրել, ձեռագրերը ոչինչ չեն ասում:

Իր ապրած ժամանակաշրջանի՝ թուրք-օսմանյան ասպատակությունների, ավերածությունների ու շահատակությունների մասին բանաստեղծն ինքը շատ հակիրճ գրել է.

Հագարացիք օրիճօք թիր,  
Զագոս խանձեն որպէս ըգֆուր...

Սա նշանակում է, թե օտար տիրակալներն իրենց թյուր (ոչ քրիստոնյա) օրենքներով մեր ազգը հրի են մատնել, խռացնելով այն իրադրության պատկերը, որ մանրամասն ու հավաստի նկարագրում են ձեռագիր հիշատակարաններն ու պատմագրական հուշարձանները: Եթե սրան ավելացնենք

նաև ժողովրդի ուսերին ծանրացած հարկային լուծն ու կրոնական հալածանքները, ապա պարզ կյնի հայ ժողովրդի վիճակը Գրիգորիս Աղթամարցու ապրած ժամանակաշրջանում: Նույնպիսի փոքրիկ, բայց դիպուկ արտահայտություններ ենք գտնում նրա բանաստեղծություններում իր հետագա տարիների աստանդական կյանքի, բեկված սրտի ու հոգեկան տառապանքների մասին:

Երգեմ ձայնիս նրադէ,  
Մոլորական եմ ի տանէ,—

գրել է ընկերոջը՝ Հովսեփ Աղթամարցի նկարչին ուղղված իր նամակ-բանաստեղծությունում: Իսկ ուսուցչին՝ Գրիգոր Բաբունուն, ձոնված տաղում բացվում է ավելի.

Որպէս զջուր գճամ ես,  
Ի տեղ դարար շտոնեմ ես,  
Ղարիպ կենօք շրջիմ ես,  
Կեանքս է հարամ, թէ գիտես:

Եվ իրոք, նրա ձեռագրերը մեզ տանում են դեպի Աղթամար, Մեծոփ, Արձեշ, Ուռնկար, Վարազ վանքերը, ուր «թափառնիկ» կյանքով տարբեր վայրերում ծվարած բանաստեղծկաթողիկոսը մատյաններ է արտագրում, ձեռագրեր նկարապարզում: Ձեռագրերում պահպանված են Աղեքսանդր Մակեդոնացու կյանքի նկարապարզված պատմության օրինակներ, որոնք հաստատապես Գրիգորիս Աղթամարցու գրչին են պատկանում. այդ նշված է կամ նկարների կողքին կամ գրքերի հիշատակարաններում:

Բայց ամենից ավելի Աղթամարցին բանաստեղծում է՝ երգում սեր ու խաղաղություն, զարուն ու բնություն, աստվա-

ծաշնչական «Երգ երգոցի» հարասության մեջ դնելով հոգու սեփական ջերմությունն ու կյանքի ծարավը:

Ուսումնասության շրջանում գրված Աղթամարցու տաղերը ներկայացնում են այն միջավայրը, հոգեբանությունը, բարքերն ու գրական ավանդույթները, որոնցում ձևավորվել է երիտասարդ բանաստեղծը: Նրա վաղ շրջանի ստեղծագործություններին բնորոշ են միջնադարյան-կրոնական մտածողությունն արտահայտող գաղափարներ, որոնք համահնչուն են մեր շատ տաղերգուների ստեղծագործություններին: Դրանց նյութն է մարդու մեղսականության գաղափարը («Եղուկ ու հապար մի վայ»), աստվածածնին նվիրված փառաբանությունը («Անեղին տաճար»), վարքագրական հերոսների մեծարումը («Ոտանաւոր, զվարս Մարինոսի ճգնավորին», «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն»), մտերիմներին ուղղված անձնական քնարերգական պոռթկումները («Գանգատ առնեմ սիրով զքեզ», «Այբէն մինչև ի Քեն քէնէ գանգատիմ ես») և այլն:

Նույնիսկ այս շրջանի ժառանգության մեջ արդեն նկատվում է մի հատկություն, որ հետագայում պետք է դառնա Աղթամարցի բանաստեղծի հեղինակային դիմանկարի բնորոշ առանձնահատկությունը՝ արտաքին պարպության մեջ ասելիքի անհատակությունը. այդ է պատճառը, որ նրա շատ ստեղծագործությունները մինչև օրս իրենց բովանդակությամբ մասնագետների վեճի առարկա են մնում կամ, առնվազն, տարբեր մեկնաբանությունների արժանանում: Թերևս այստեղ զգալի դեր են խաղացել նրա երիտասարդական զգայուն ընկալումների և կաթողիկոսական դիրքի հակադրությունը. անմիջական զգացումների պոռթկումներ, միաժամանակ՝ մշուշապատ, սքողված ակնարկներ. ահա դրանցից մի նմուշ.

Գանգատ առնեմ սիրով քեզ,  
Թէ միտ դնես ու լըսես,  
Ջծառայս քո անտես շառնես,  
Ջխորհուրդ սրբոյն յայտնեմ քեզ:

Րաբունարաբ խրատես,  
Զյիմարս ի յիմաստ ածես,  
Զցրունայս դարձեալ ժողովես,  
Թևօքդ քո ամփոփես:

Մեմ է ուղղված զգացմունքը. կնո՞ջ, ուսուցչի՞ն, ընկերո՞ջը: Որոջ դեպքերում դա մոտավորապես որոշակիանում է կա՛մ ակրոստիքոսով, կա՛մ վերնագրով, կա՛մ էլ բանաստեղծության մեջ՝ կոչական դիմումով: Իսկ որոջ դեպքերում, ինչպես օրինակ «Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա» տաղում վարդի ու բլբուլի սյուժետային պատմության մեջ բանաստեղծի ենթատեքստը մնում է անորոշ ու մշուշապատ:

Թվում է, թե դա որոշակի սիրավեպ է: Սակայն տաղի սիրային ընդհանուր տրամադրության մեջ բացառված չէ տեսնելու նաև հայրենիքից քշված ու վտարանդի բանաստեղծի կակիծը:

Այս դեպքում բլբուլը հեղինակ պիտի դիտել, իսկ վարդը՝ հայրենիք: Ուր էլ ապաստանել է բլբուլը, կսկծացել է նրա հոգին և տեղից տեղ թափառելով՝ հանգիստ չի գտել:

Տաղի հայրենաբաղձության մի կո վան կարող է ծառայել նրա կտրուկ վերջաբան երկտողը՝ երկիրը «հազարացոց» ձեռքին խանձված լինելու մասին: Եթե նույնիսկ «Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա» տաղում Գրիգորիս Աղթամարցին չի այլաբանել հայրենիքն ու նրա նկատմամբ ունեցած իր վերաբերմունքը, այլ մարդկային սիրո պատմությունն է արել, ապա, միևնույն է, դրանով նա ստեղծել է մի երապային բնաշխարհ,

որ հակադրված է առկա իրականությանը: Սա մի տեսակ հրաժարումն է այդ դառն իրականությունից, յուրատեսակ փախուստ՝ ոչ թե մոլեռանդ հավատից ու մեղքերի ծանրությունից, այլ ապգային ահավոր սպանդից թելադրված: Այդ երապանքը մարմնավորում էր Աղթամարցու ժամանակաշրջանի մարդկանց տենչանքը խաղաղ կյանքի, սիրո ու երջանկության մասին:

«Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա» տաղը ուշագրավ է գեղարվեստական մի շարք առանձնահատկություններով. այն գրված է յամբական պարզ տողերով, հանգերը փոփոխվում են յուրաքանչյուր տան մեջ, քանի որ տաղը տնավերջ տառերով այբուբենն է հողում: Բանաստեղծության լեզուն մյուսներից տարբերվում է իր շարահյուսությամբ, բարբառային ձևերի ավելի հաճախակի գործածությամբ:

Նշված տաղը մեկ օգնում է Աղթամարցու միևնույն շրջանի ստեղծագործության մեջ տեսնելու երկու տարբեր բնույթի գործեր, մի խումբ, որ հարապատ է ժամանակի հոգևոր գրականությանը (գրաբարյան բառապաշար, հոգևոր երգերում ընդունված ոճեր ու թեմայի որոշակիություն), մյուս կողմից՝ տիպիկ տաղերգական, նույնիսկ աշուղական երգերը հիշեցնող ստեղծագործություններ (միջին հայերեն, ժողովրդական պարսկաբանություններ, տաղաչափական մատչելի ձևեր, թեմայի այլաբանական դրսևորում):

Հետագայում միևնույն պագումներն ստանում են բանաստեղծական նոր որակ՝ ուղղակի պատկերների խորքում թաքնրված վերացական ենթիմաստ, որն ընդլայնում է թեմայի ընկալման սահմանները: Այդ վերացականությունը ամենից ավելի երևան է եկել «Դու ես յԱդինայ դրախտէն», «Արեգակնափայլ գեղով լի յուսին», «Դու դրախտ Եդեմայ», «Դու ես արե-

գակ, լուսին ի լուման», «Աստուածանկար պատկեր յօրինեալ» և այլ տաղերում, որոնք բացահայտում են Աղթամարցու ստեղծագործության այդ ուշագրավ առանձնահատկությունը: Նրա տաղերում հաճախ հանդիպող գունազեղ նկարագրությունները, պատկերավոր բնութագրումներն ու հուլպաթաթավ արևելյան Վուգորդությունները, չափազանցական ոճերը միշտ չէ, որ առ կինն ունեցած զգացման արտահայտություններ են, այլ, երբեմն, բանաստեղծական հնարանք, որ կիրառում է նա այս կամ այն մտերմի՝ ուսուցչի, ընկերոջ կամ նույնիսկ օտարի նկատմամբ: Դրանք ներբողական դրսևորումներ են՝ ոճավորմամբ սկիզբ առած նաև զանձագրական կամ շարակա-նային ակունքներից:

Աղթամարցու ստեղծագործությանը հատուկ է միջնադարում սիրված ալլաբանությունը, որ փոխարինում է անորոշ վերացական դրսևորմանը և հնարավորություն տալիս ստեղծագործությունն ընկալել թե՛ իր ուղղակի իմաստով, թե՛ այլաբանական մտքով: Այդպիսիներից են «Ահա այգիք մեր ծաղկեցան», «Գարունն երեկ», «Յետ գնալոյ վարդին» տաղերը:

Նայ տաղերգուներից ամենից ավելի Աղթամարցուն են վայելում Մ. Աբեղյանի այն խոսքերը, թե «Նետագայում (Կոստանդին Երզնկացուց հետո) ևս ալլաբանության են դիմում բանաստեղծները, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել, այլ, որ ալլաբանական ձևը դուր էր գալիս կրոնավորներին»: Նշանակում է՝ ալլաբանությունը ժամանակի ընդունված հնարանք է եղել, մտածելու և բանաստեղծելու մի ձև, որ շատ հրապուրել է նաև Աղթամարցուն: Բայց Աղթամարցու ալլաբանությունը յարբերվում է մյուս տաղերգուների ալլաբանությունից այն բանով, որ, եթե, ասենք, Կոստանդին Երզնկացին որոշակի նշում էր իր ալլաբանու-

թյան բովանդակությունը, թե վարդ ու բլբուլի սիրավեպի մեջ «մի ի մարմին հասկանայք, այլ՝ հոգևոր», ապա Աղթամարցին ոչ միայն որոշակի չի դարձնում այդ, այլ, ընդհակառակը, կարծես դիտմամբ այնպես է հորինում տաղը, որ որոշակիությամբ չսահմանափակվի նրա ներգործության աստիճանն ու շրջանակը:

Ինչպես Գրիգոր Նարեկացին, չորոշակիացնելով մեղքի գաղափարը, Ողբերգության մատյանում հնարավորություն էր ստեղծում միջնադարում ապրող ամեն մի անհատի համար՝ տեսնելու սեփական մեղքի հիշատակություն ու բռնելու ապաշխարանքի ուղին, այդպես էլ Գրիգորիս Աղթամարցին երգում էր այնպիսի այլաբանությամբ, որ և խտաբարո կրոնավորն իր հոգու համար նյութ գտներ, և՛ պանդուխտը՝ մխիթարություն, և՛ սիրահարը՝ ողջակեպ սիրտ:

Աղթամարցու ստեղծագործությանը հատուկ է բավամաձայնությունը, ինչպես լինում է երաժշտության մեջ: Մեկ թեմա չէ, որ ծայրեծայր ու որոշակի վարզանում է, այլ հույզերի ու թեմաների մի խաչաձև միահյուսում, որ մի կողմից դժվարացնում է երկի անմիջական ընկալումը, բայց մյուս կողմից՝ պատճառ է դառնում ընթերցողի յուրօրինակ ընկալման: Այս մի կողմից վկայում է Աղթամարցու բանաստեղծական հմտությունը և մյուս կողմից՝ բացահայտում ժամանակի պատմահասարակական կյանքի բարդությունն ու գաղափարական խմորումների առկայությունը:

Եվ որքան էլ Աղթամարցին իբրև կաթողիկոս ցանկանում էր քողարկել իր երկերի աշխարհիկ շունչը, միևնույն է, նրա տաղերը մեծ մասամբ ընկալվում էին իբրև աշխարհիկ պացումների արտահայտություններ:

Տաղարաններից վաղուց արդեն դուրս էին եկել և ժո-

ղովրդի մեջ մտել Ֆրիկի, Երվնկացու, Կեչառեցու, Թլկուրանցու, Նաղաշի երգերն ու սիրո տաղերը: Նույն տաղարաններն էին ներթափանցել ժողովրդական սիրո հայրենները: Աղթամարցու նույնիսկ կրոնական տաղերն ասողը կամ լսողը միշտ կարծելու էր, թե նա էլ «ի մարմին» է երգում: Այսպես ընկալելու շատ հիմքեր էին տալիս այդ տաղերը. նրանք հազեցված էին հույզով, մարդկայնությամբ, սիրով դեպի մարդը, բնությունն ու կյանքը: Խաղաղ կյանքի կարոտ մարդը Աղթամարցու նույնիսկ այլաբանված զարնան ու վարդի մեջ պիտի տեսներ իսկական զարուն, կատարյալ սեր, մարդկային կարոտ:

Այդ էր տեսնում միջնադարյան մարդը նաև մեր տաղերգության գոհարներից մեկի՝ «Յամէն առաւօտ և լոյս» տաղում, որը նախորդների նման բազմանվազ է իր այլաբանությամբ:

Ամեն օր արևածագին, երբ քնից արթնացած քնարական հերոսը լսում է պարտեպից դայլալող սոխակի երգը, այդ ընդունում է իբրև մահվան հրավեր:

Յամէն առաւօտ և լոյս  
Գարրիէլն ասէր հոգոյս.  
«Արի՛, ե՛լ ի յայս այգոյս»,  
Այս իմ նորատունկ այգոյս:

Այգին ցանկով ու հնձանով Աղթամարցու ստեղծագործության մեջ կրկնվող մի սիրված պատկեր է, որ խորհրդանշում է կյանքը: Գանաստեղծության փիլիսոփայական-խոհական առանցքն այն է, թե մահը մարդուն ուղեկցում է ծննդից ի վեր, որ նա միշտ պետք է պատրաստ լինի դիմավորելու մահվան՝ միջնադարյան այն ըմբռնումով, որ մաքրագործված լինի մեղքերից և պատրաստ՝ կանգնելու ահեղ դատաստանի

առաջ: Պարտեւը մարմինն է, ծաղիկները՝ մարդու գեղեցիկ արարքները, փշերը՝ նրա մեղքերը:

Միջնադարում ընդհանրացված այս գաղափարը տաղում ստացել է նոր երանգ ու բովանդակություն: Այլևայլ հույզերից ավելի այստեղ հնչում է մարդկային կյանքի կարճատևության ողբերգությունն՝ ի հավաստումն այդ կյանքի սիրո ու փառաբանության:

Ինչպե՞ս ելնեմ ի յայգոյս..  
Քար եմ քերեր սարերոյս,  
Փուշ եմ կրեր ձորերոյս,  
Պատ եմ բոլորեր այգոյս..  
Դեռ չեմ կերեր ի պտղոյս,  
Կասե՞ն՝ թ' «Արե՛կ, ե՛լ անգոյս»:

Բայց որքան էլ ծանր է մարդու համար աշխարհը թողնելը, որքան էլ տառապալից է մահվան գաղափարը, այդ անխուսափելի է:


Հոգին մարմնից անջատվելուց հետո, մարդու կյանքի կարճատև ընթացքն ավարտելուց հետո էլ շարունակվում է կյանքը՝ իր բնական ճանապարհով և, ինչպես իր կենդանության օրոք, մահից հետո էլ առանց այգեպանի հարատևում է կյանքը:

Այստեղ արտահայտված է քրիստոնեական հավատով ու բարոյականությամբ սնված միջնադարյան մարդու և՛ սերը կյանքի նկատմամբ, և՛ սիրո անհագուրդ ծարավը, և՛ ամիստասանքը գեղեցիկը թողնելու համար, և՛, միաժամանակ, հավատն ու երկյուղը հանդերձյալ կյանքի հանդեպ: Բայց այս բարդ հանգույցը բանաստեղծի գրչի տակ վեր է ածվել կյանքի գովերգի և իր տրամադրությամբ հաստատել կյանքը՝ կամա թե ակամա հակադրելով երկնայինի գերադասության ու հանդերձյալ կյանքի գաղափարին:

Իր տաղերի բազմահարուստ ձևերով և կյանքի նուրբ զգացողությամբ Աղթամարցին նորի արտահայտիչն է եղել միջնադարյան հայ գրականության մեջ: Չբավարարվելով անցյալի ժառանգության օգտագործումով, նա հարստացրել է իր ստեղծագործությունները արտահայտչական նորանոր հնարանքներով, ավելի սերտորեն մտտենայով ժողովրդական ոգուն: Անգամ ոտանավորի կառուցման ավանդական ձևերում (ակրոստիքոս) նա հետևել է լեզվի ժողովրդական՝ բարբառային հնչմանը, ի տարբերություն այլ տաղերգուների գրաբարի հրնչունական համակարգի օգտագործման:

Սակայն Աղթամարցու ուժն ու հմայքը նրա ընդհանրացման կարողությունն է, նեղ անձնականը համընդհանուր դարձնելու վարպետությունը: Նրա տաղերում ոչ այնքան բանաստեղծին առիթ տվող մասնակի փաստը կամ մարդկային հույզերի զգացումն է վերարտադրված, որքան դրանց ընդհանրացված դրսևորումն առհասարակ: Նրա սիրո և մտածումի ելևէջների մեջ ետ է մղվում բանաստեղծի «ես»-ը՝ ապարեկ տալով համամարդկայինին:

**ՄԱՅԻՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ**



1

## ՏԱՂ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՂԹԱՄԱՐՅՈՅ Է

Եղուկ ու Բագար մի վայ,  
Որ մեղօք ես աղտեղացայ,  
Ղեկօք ես ի ծով իջայ  
Եւ հողմով չարին վարեցայ:  
Կանգնեալ դիտելով ծանեայ,  
Ջերծելոյ հընար իսկ չըկայ:  
Ես եմ մոլորեալ ծառայ,  
Ջիս գերեալ չարըն սատանայ:  
Լուսով քո յիս ակնարկեա',  
Ջիսաարեալըս լուսաւորեա',  
Ինձ յոյս և ճարակ չըկայ  
Ելանել ուստի ես անկայ:  
Գերի ւ անհիմաստ ծառայ,  
Մ' երկմըտեր, աներկբա յուսա',

143299

Բամից խընամողն է նա,  
 Զգերելոյ դարձըն կամենայ:  
 Իսկ դու ի մեղաց գրղջա՛  
 Եւ յուսով ի նա հաւատա՛,  
 Գրթած ւ ողորմած է նա,  
 Զմաքսաւորն և գպոռնիկն յիշեա՛:  
 Որ և նոյն աստուածն է նա,  
 Ամենի գղչալն աղերսայ,  
 Բամից բոլորից արքա,  
 Զսառնացեալս ի սէր քո վառեա՛:  
 Իսկ եւ յանցաւոր գըտայ,  
 Զի ի քէն մեղօք հեռացայ:  
 Սիրով գիս ի քեզ կապեա՛,  
 Զիս արժան տեսոյդ քո արա՛:  
 Նաև եղկելոյս գըթա՛,  
 Անառակ որդոյս ողորմեա՛:  
 Ահա ի քէն մերժեցայ  
 Եւ ըզգութ սիրոյդ մոռացայ.  
 Սովամահ եղեալ շրջիմ,  
 Տագարակ դիացըն ընթացայ.  
 Եւ արդ՝ ճըշմարիտ ծանեալ  
 Զիմ մեղաց մուրհակն ընթերցայ.  
 Լերինքդ ի կշռել կուգայ  
 Եւ մեղաց իմոց թիւ ոչ կայ:  
 Է՛, ողորմելի ծառայ,  
 Զքեզ յանձն աստուծոյ արա:  
 Թեպէտ քո չարիքն յուով,  
 Որ թըլով ի հաշիւ չըկայ,  
 Վերըստին մեղաց թափեա՛

ԵՊՀ ԳՐԱԳԱՐԱՆ  
 Библиотекa EGY

Եւ յուսով դու խոստովանեա՛.  
 Ի կոյսն ապաստան լե՛ր դու  
 Եւ նովաւ զաստուած աղաչեա՛,  
 Նշանաւ խաչի նորա  
 Անդադար զքեզ տեսունագրեա՛.  
 Զըրօքըդ զիս ոտոգեա՛,  
 Զի տապօք չարին չորացայ:  
 Կարկամեալ մեղօք մեռայ,  
 Վերըստին, տե՛ր, զիս նորոգեա՛,  
 Դու զիմ ցաւս ապաքինեա՛.  
 Բաջ բըծիշկ Յիսուս, ողորմեա՛  
 Եւ քեզ փառք այժմ և սպա,  
 Անզըրաւ կենօք յարակայ:

2

**Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՅՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՈՏԱՆԱԻՈՐ  
ԶՎԱՐՍ ՄԱՐԻՆՈՍԻ ԾԳՆԱԻՈՐԻՆ**

Անծին և անըսկիզբն է հայրն երկնային,  
 Որդոյ պատճառ ծնընդեան անծամանակին.  
 Բըխումն անքըննարար, ճըշմարիտ հոգին  
 Ի կերպն իր ըստեղծեաց զԱդամն առաջին:  
 Փառօք զնա զարդարեաց և եդ ի դրախտին,  
 Պատուէր երեսո նմա և կընոջ նորին՝  
 Յամենայնէ ուտել պատուիրեաց նոցին,  
 Բաց ի ծառոյն միոյ բարոյ և չարին:  
 Յորժամ անցաւ Ադամ զպատուէրն արարչին

Եւ գմաճաբեր պըտուղըն ճաշակեցին,  
 Եւ մերկ և խայտառակ զինքեանըս տեսին  
 Յանապական լուսոյն, որ զգեցեալ էին:  
 Մահու գըրաւեցան, զի զպատուերն անցին,  
 Ի տրտմութեան հովիտըս նոքա մըտին,  
 Եւ քրտամբք երեսաց ըզհրամանն առին  
 Վաստակել զերկիր և ուտել զբերս նորին:  
 Աստուածըն մարդասէր և հայրն երկնային,  
 Որ ոչ անտես առնէ զգործս իւրոյ ձեռին,  
 Զծոցածինն առաքեաց յերկիր ըստորին՝  
 Մարմին անապական էառ զմարդկային:  
 Ըզգործըս կատարեաց միածին որդին,  
 Առաքելովքն որսաց զազգըս մարդկային,  
 Ոմանք զփառս աշխարհիս ունայն խտտեցին,  
 Զինչս և զըստացուածս աղքատաց տուին:  
 Եւ շատք զհալածանս կամաւ յանձն առին  
 Եւ զարինս իրեանց ի յերկիր հեղին.  
 Եւ դառըն տանջանացըն համբերեցին,  
 Ռապէս զոսկի ի բովըս քըննեալ գըտին:  
 Իսկ կէսքըն կուսութեամբ զանձինս պահեցին,  
 Ի յայրս և ի փապարս լերանց բնակէին,  
 Սովով և ծարաւով զանձինս մաշեցին,  
 Ըզցայգ և ըզցերեկ աղօթս առնէին:  
 Անտես ի մարդկանէ անդադար ճըզնէին,  
 Որախոսութեամբ վըշտացըն համբերէին,  
 Բազում և անհամար են գունդըք սոցին,  
 Որ ոչ ճառել կարէ լեզու հողածին:  
 Զոր օրինակ աստեղք երկնից ոչ թուին,  
 Այնպէս գունդըք սրբոցն ի յեկեղեցին,

Յորոց և ի բազմաց մինև այս գովելին՝  
Սուրբ կոյսըն Մարինոս, դուստր Ներգիներն:



Այր մի աշխարհական և յոյժ մեծատուն,  
Բնութեամբ էր ողորմած և աստուծոյ սիրուն,  
Այրս այս փառատրեալ Ներգիներ անուն,  
Մեռանի կին սորա կամօքն աստուծոյն:  
Դուստր մի մընաց սոցա Մարիամ անուն,  
Որ էր խիստ գեղեցիկ, խոհեմ և իմաստուն.  
Բնութեամբ էր սրբակեաց և մըտօքն արթուն  
Վէ էր յոյժ սիրեցեալ յաչս ամենեցուն:  
Խորհեցաւ հայրն ի միտս և ասաց սուրբ կուսին,  
Թէ՛ Առըն տաց ըզքեզ ըստ կամաց քոյին,  
Վէ ինչք, և ստացուածք իմ ընդ քեզ լիցին,  
Վէ ես երթայց ի վանք մի յանապատին:  
Յայնժամ պատասխանեալ բանից ծընօղին  
Ողջախոհ սուրբ տըղայն և իմաստիք լին.  
— Կեցուցանել կամիս ըզհոգի քոյին  
Վէ զիմս կորուսանել թուլութեամբ քոյին:  
Վամիս դու վայելել ի յանճառ բարին,  
Անանց կենօք հըրճուիլ ի փառս արարչին,  
Որպէս որ խոստացաւ յԱետարանին,  
Վէ զիս միայն զըրկես. այդ անհընարին:  
Ասէ Ներգիներն, հայրըն սուրբ կուսին.  
— Ապա զի՛նչ արարից վասըն քո անձին:  
Ասէ.— Տար զիս ընդ քեզ ի յանապատին,  
Յոր վայր և երթիցես, գամ ըզհետ քոյին:

Ներգիւնէնս ասէ, թէ՛ Այդ ոչ լինին,  
 Զի դու ես գեղեցիկ և պատուական կին,  
 Եւ ես ի յարանց վանս երթամ առ նոսին,  
 Եւ ասացեալըդ քո բընաւ ոչ լինին:  
 Պատասխանի երեսն նա իր ծընօղին.  
 — Գերծեա զգլուխս,— ասէ,— դու վասն արարչին,  
 Ըզգեստ ինձ առնացի զգեցո իմ անձին,  
 Եւ յանձն առնեմ ես զիս կամաց արարչին:  
 Եւ նա, որ պահապան իր յուսացողին,  
 Նա պահեցէ ըզիս յորսողէ չարին  
 Եւ յաջողէ ըզգործս իմ ի վարըս բարին  
 Եւ առաջնորդեցէ ի յերկինս վերին:  
 Յայնժամ հաճոյ թուեցաւ բանըն տըղային.  
 Ներգիւնէնս արար ըստ կամաց նորին.  
 Բաշխեաց զինչս ամենայն կարօտեալ անձին  
 Եւ ի յերկինս զանձեաց, որ ոչ պակասին:  
 Ելեալ ողի անկեալ վանք մի գընացին,  
 Եղեն կըրօնաւորք ի սէր անմահին.  
 Փոքրեալ զհերս Մարիամ և սըքեմ առին  
 Մարինոս, Եւզինոս զանուանս ասացին:  
 Անէր օր ըստ օրէ Մարինոս կուսին,  
 Ի վարըս ճըզնութեան կըրթէր սրբուհին,  
 Յետ հինգ ամաց փոխի հայր Մարինոսին՝  
 Բարի վարութ կեցեալ Եւզինէոսին:  
 Իսկ Մարինոս մըրցեալ ի վարըս բարի  
 Եւ ելըս քան ըզես յաւելոյր ի նմին,  
 Ծըզներն նա անդադար որպէս զանմարմին  
 Անխախտ սրբակրօն և առաքինին:  
 Կրօնաւորք ոխտին յոյժ զարմանային

Վասըն չգալոյ մօրուացըն Մարինոսին,  
 Ջի բառքն էր նրբաձայն, ներքինի սսին,  
 Հասակն էր փոքրագոյն, այնու ստուգէին:  
 Եւ հայր վանացն ասաց.— Առաւել ճրգնի,  
 Վասն այն է նրբաձայն և մօրու չունի:  
 Եւ սուրբըն Մարինոս փոյթ ի կոչնակի,  
 Արագահաս ծառայ ի յերթնեկի,  
 Ամենեցուն հնազանդ և լըսող լինի,  
 Անորրտունց ւ անվեհեր ի գործ աշխատի:  
 Լըցեալ էր բարութեամբ կոյսըն գովելի,  
 Ջի էր ամենայնի գործովքըն բարի:  
 Յաւոր միում հրաման ի հօրէն առին  
 Երեք կրօնաւորք հետ Մարինոսին,  
 Ի պէտս կարեաց վանացն ելեալ գընացին  
 Եւ ի ճանապարհին պանդոկ մի իջին:  
 Գիշերն անդ օթեցան մինչ յառաւօտին  
 Եւ վաղվեճէ ելեալ լուսով գընացին.  
 Ուր և առաքեցան ի պէտս ինչ գործին  
 Դարձան ի վանս իրեանց, ուր գնացեալ էին:  
 Եւ յայնմ գիշերին, ուր եղբարքն էին,  
 Զօրական մ' էր իջեալ ի յայն պանդոկին:  
 Նընջեաց նա ընդ դըստեր պանդոկապանին  
 Եւ լըդացոյց ըզնա յագդմանէ չարին:  
 Եւ, յորժամ ազդեցաւ պանդոկապանին  
 Խոշտանգեալ նա զդուտրն վասըն չար գործին,  
 Թէ՛ Ո՛վ ապականեաց զկուսութիւն քոյին,  
 Ասա, զի գիտացից ըզգործող չարին:  
 Ասաց թէ՛ Աքեղայքն, որ առ մեզ իջին,  
 Մինն, որ էր մանկագոյն Մարինոս սսին.

Նա չար բանիք պատրեաց զիս այն չար ոգին  
 Եւ նա ննջեաց ընդ իս յայնրմ գիշերին:  
 Եւ յարուցեալ գընաց պանդոկապանին  
 Ի վանքըն բարկութեամբ սուրբ Մարինոսին.  
 Զհայրըն թըշնամանէր, զմիաբանս նորին՝  
 «Պոռնիկ, պեղծ, խաբէբայ» ասելով նոցին:  
 Ասաց հայրըն վանաց պանդոկապետին,  
 Թէ՛ Ի՞նչ վընաս եհաս ի մէնջ քո անձին  
 Կամ տան և ընտանեաց և ընչից՝ քոյին,  
 Ընդէ՛ր թըշնամանես ըզմեզ զայրագին:  
 Թէպէտ եմ անարժան ես ի մէջ սոցին,  
 Այլ արեղայքս հաճոյ ծառայք եմ փըրկչին,  
 Եւ զհա՛րդ իշխես դու հայհոյել զնոսին,  
 Որք եմ իբրև հրեշտակ ամենակալին:  
 Յայնժամ պատասխանեալ պանդոկապետին.  
 — Ո՛ր է այն Մարինոս արեղայ քոյին,  
 Որ օթեցաւ առ իս ի յիմ պանդոկին,  
 Սիրով մեծարեցաք ի յարկըս ներքին:  
 Ըզդուտորն իմ յըղացոյց. ի յայն գիշերին,  
 Զիս ատելեաց իմոց արար նախատին,  
 Եւ սիրելեաց իմոց տըրտմութիւն հասին,  
 Եւ թըշնամիքս ամէն զիս այպանէին:  
 Իսկ Մարինոս չէր անդ յայն ժամանակին.  
 Եւ հայրն, ասաց, թէ՛ Գայ, գանեմ սաստկագին,  
 Ի վանացս արտաքսեմ ըզնա տըրտմագին,  
 Որ դու նքս լքես զհամբաւ նորին:  
 Եւ ի տուն իր դարձեալ պանդոկապետին,  
 Եւ եկըն Մարինոս, հայրն եհարց նըմին,  
 Թէ՛ ննջեցե՛ր ընդ դատեր պանդոկապետին.

Եւ նա խոնարհութեամբ կալաւ ի յանձին:  
 Եւ ի հօրն յոտքն անկաւ սուրբըն լալագին,  
 Ասաց թէ՛ Մեղայ, հայր, յաղթեաց թըշնամին,  
 Գործեցի գշարըն գայն կամօք քանսարկոսին,  
 Դու ծանր ապաշխարանք դիր իմում անձին:  
 Եւ հայրըն յոյժ գանեաց ըզնա խըստագին  
 Եւ ի վանացն եհան՝ ասելով նըմին.  
 — Եղաք վանօրէից ծաղր և նախատին,  
 Զիա՞րդ կստարեցեր զցանկութիւն չարին:  
 Եւ նա երթեալ նըստաւ ի վերայ վիմին,  
 Որ էր հանդէպ վանաց չարևըտեան դին,  
 Կատարելով անդէն զաղօթս ըստ կարգին  
 Ուրախութեամբ կըրէր ըզվիշտս ի յանձին:  
 Ապա երթեալ եղբարցն խող մի շինեցին,  
 Զտեղի առեալ եկաց ի յայն խըրճըթին:  
 Եւ յորժամ ցընկնեցաւ վաւաշտուն այն կին,  
 Զտըղայն տարաւ ի վանս պանդոկապետին:  
 Տեսեալ ըզՄարինոս արտաքոյ ուխտին,  
 Ընկեց գտըղայն ի գոգըն համբերողին  
 Եւ ասաց՝ Առ գորդիդ, գշար սերմըն քոյին,  
 Զգաւակըդ քո սըն՝ ի քեզ նախատին:  
 Իսկ Մարինոս առեալ գտըղայն ի յանձին  
 Տանէր նա ի կանայս, զի ըստին տացին,  
 Եւ ի հովուացն առնոյր կաթըն տըղային.  
 Եւ յետ տարոյ միոյ գնա մըկըրտեցին,  
 Սըրապիոն անուն նըմա կոչեցին:  
 Եւ կաթն էր ոչխարաց կերակուր տղային.  
 Այնպէս սնոյց զմանուկըն զամս երեքին  
 Անձանձիր ւ անտըրտունց պահէր զպատանին:

Եւ յետ երից ամաց եղբարք ժողովին,  
 Միաբան գան առ հայրն և զայս ասացին.  
 — Թէ ոչ դարձ լինիցի վանս Մարինոսին,  
 Ելանեմք մեք ամէնքս ի վանաց քոյին:  
 Եւ հայրն հրամայեաց՝ գնացեալ և բերին.  
 Եկեալ անկաւ ի յոտս հօրըն սրբոսկին,  
 Եւ հայրն ասաց թէ՛ Չես արժան սուրբ յարկին,  
 Միայն ի վանքս մո՛ւտ, ըստ խնդրոյ սոցին:  
 Մարինոս ոչ կամէր ըզկեալն իր ոխտին,  
 Աւեր թէ՛ Թոյլ տուք ինձ մընալ յիմ խըղին,  
 Զի չեմ ես արժանի կոխել զչեմս ոխտին:  
 Այլ բռնութեամբ ըզնա ի վանքն մոծին.  
 Զանարգ և ըզխիստ գործ հայրն ետոր նըմին,  
 Ուրախութեամբ տանէր նա ամենայնին,  
 Բարի ամօք կեցեալ նա ի սպաս ոխտին,  
 Համբերող նահատակն և յոյժ գովելին:  
 Յաւոր միում տեսեալ երազ սուրբ կուսին՝  
 Այր մի լուսապայծառ, զի ասէր նըմին.  
 — Եկ ի հանգիստըն քո պատրաստեալ տեղին,  
 Զոր յաստուծոյ տուաւ քեզ անանց բարին:  
 Վասըն համբերութեան նըզնութեան քոյին,  
 Յարագուարճ բերկրեացիս ի տես արարչին,  
 Եւ տեսոն ազնիւ ծառայ, շահող քանքարին,  
 Ե՛կ, մո՛ւտ ի յառագաստ անմահ փեսային:  
 Ելեալ խողն իր գընաց, որ էր ի վիմին,  
 Եւ անդ անկաւ հիւանդ ի կարծր անկողին,  
 Եւ յետ երից ատուրց հանգեալ սրբոսկին,  
 Եւ ոչ ոք զնա գիտաց, մինչ լայր պատանին:  
 Եւ գընացեալ տեսին ըզերանելին,

Ազդեցին հօր վանացն՝ զմեռանիլ նորին.  
 Ասաց թե՛ Անարծաւ եմոյտ տաճարին,  
 Վասն այն պատուհասեալ մեռաւ փութովին:  
 Եւ հայրն հրամայեաց, հանեալ թաղէին,  
 Գնացեալ ըստ օրինին զնա պատանէին,  
 Որպէս կրօնաւորաց օրէնն ըստ կարգին,  
 Եւ ի զըսպելն ըզնա տեսին՝ զի էր կին:  
 Ահի ապուշ մնացեալ և զարմանային,  
 Դառնն հեծեծանօք յոյժ հառաչէին  
 Եւ զնացեալ ողբով առ հայրն ասէին.  
 — Մեղար դու աստուծոյ, փորձանք քեզ հասին,  
 Ընկեցեր և ըզմեզ ի մեղքս քոյին:  
 Հայրն զահի հարեալ և ասաց նոցին.  
 — Զի՞ է, ընդէ՞ր, որդեակք, ողբայք տըրտմագին:  
 Ապա նոքա ասեն՝ Մարինոսն է կին:  
 Եւ հայրն զարհուրեալ յարուցեալ զնացին,  
 Անկաւ ի վրա ոտիցն՝ նուաղէր հոգին,  
 Կոծէր զանձն և փետէր զմօրուսն ընդ հերին  
 Եւ հարկանէր զգլուխն ի քար և ի գետին:  
 Եւ գիրկս արկեալ զոտից սրբութիոյ կուսին  
 Եւ ասէր՝ Թաղեցէք և զիս ընդ սըմին,  
 Զի զինչ, որ անցուցի ես ի յանձ սորին,  
 Եւ թողութեան չեմ ես արծանի քնասին:  
 Բազում կրօնաւորք ի թաղումն եկին  
 Աղախնոյն Քրիստոսի սուրբ ճրգնաւորին:  
 Մինչդեռ հայրն կոծէր ի վրա դագաղին,  
 Եւ Մարինոս կանգնեաց ըզգլուխն ինքնին,  
 Կալեալ և համբուրեաց զհօրն աջոյ ձեռին,  
 Ճրովի դարձեալ եղ ըզգլուխն ի մահնին:

Ասաց հայրն ոչ թաղել ըզերանելին,  
 Մինչ որ պանդոկապանն յըղեալ կոչեցին  
 Եւ ցուցին զՄարինոս ասելով նորին,  
 Թէ՛ Ճանաչե՛ս ըզդա: Նա ասաց նորին.  
 — Այո՛, թողու աստուած զյանցանս իր գործին,  
 Զոր մեղաւ յիմ գաւակն ի մէջ պանդոկին:  
 Եւ հայրըն հրամայեաց պանդոկապետին.  
 — Վերացո՛ ըզօձիսն՝ և տե՛ս ըզըստին:  
 Եւ բացեալ նա ետես ըզնա, զի էր կին,  
 Ապշեալ յիմարեցաւ, անկաւ ի տեղին:  
 Եւ յարուցեալ կոծէր զինքըն խըստագին,  
 Վայ և եղուկ ասէր նա՛ ինքն իր անձին.  
 Եւ յետ լալոյն-կոծոյն տարեալ թաղեցին,  
 Երգօք հոգևորօք զնա ամփոփեցին:  
 Իսկ յետ երից ատուրց կատարման կուսին  
 Դուստրըն այսահարի պանդոկապանին,  
 Եւ ցրտեալ՝ ատամամբքն ուտէր զիր մարմին  
 Եւ եկեալ հերարձակ ի սուրբ տապանին  
 Յայտնի խոստովանի ըզգրպարտանս նորին.  
 Ասաց և ըզնընջելն ընդ զօրականին,  
 Զանմեղ օթագայիլն ըզՄարինոսին.  
 Բըծըշկեցաւ իսկոյն ի յախտէ չարին:  
 Իսկ սուրբ տըղայն ընտրեալ և առաքինին՝  
 Սըրապիոն մանուկն, ի վանքըն սնանի.  
 Կրօնատր եղեալ ընտիր ւ անուանի,  
 Մինչ հայր և առաջնորդ վանացըն կարգի:

**Ի թվականին հաչոց ինըն հարիւրի**  
**Կ և Ե տարի ւ ի նմայ ատելի**

Ես Գրիգորիս Առաքաւ Աղթամարցի  
Ապիկարըս տեսուչ և անյիշելի  
Ըզվարըս ճրգնութեան սուրբ Մարինոսի  
Ոտնաչափ համառօտ ի յաւարտ ածի,  
Զի ընթերցմամբ սորա գուարճանայք յոգի,  
Զփառս երգեսցուք փրկչին ամենագօրի:  
Առ յոտըս երջանիկ ըսարունապետի՝  
Գրիգորիոս անուն արթուն հրակողի,  
Քաջ հրոտտոր անյաղթ փիլիսոփայի  
Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի:  
Եւ որք եղանակէք ի մէջ հանդիսի  
Եւ յիշման արարէք ըզմեզ արժանի,  
Եւ ձեզ ողորմութիւն տեսունէն պարգևի  
Ի սուկալի աւուրն մեծ դատաստանի:

8

**ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱԹԱՅԵՑՈՒՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ**

Վաճառական մի հայ և յոյժ ճարտասան՝  
Մխիթար Բաղիշեցի, և աստուածածան,  
Գընաց նա ի սահմանս Ատըրպատական,  
Ի Ղում և ի յԻրաղ և ի Խորասան:

Եհաս ի Սամարղանդ և ի Բուխարայ,  
Ենուտ ի Հընդուստան և անտի գընայ  
Ի մէջ հոչակատր քաղաքըն Խաթայ,  
Որ մուշկն է պատուական երէոյ նաֆայ:

Խաթայ՝ մերձ սահմանաց Չինումաշինայ,  
Եւ անդ լինի ուսանդն չըքնաղ չինին գայ:  
Անդ է նահատակեալ առաքեալն Թումայ՝  
Հարեալ ի Սըշդիհէ. այսպէս գրեալ կայ:

Եւ են աշխարհն ամէն կոսպաշտ հաւասար,  
Ոչ ճանաչեն զորդի, սուրբ հոգին կամ զհայր,  
Ջանեղ աստուածութիւնք անձինք հաւասար,  
Զստեղծողն արարածոց և ըզլոյսն անճառ,

Ջիջումըն միածնին յերկիր հեզաբար,  
Ջմիանաղն ի բնութիւնս, որ մարմին էառ,  
Ջրևեռիլն ի խաշին, գոծոխոցն ասար,  
Նըստեալ հօր ընդ աջմէ ի քրովբէից կառ:

Անտեղեակ ւ անծանօթ են այսրմ շնորհի  
Աշխարհըն Խաթայու, զոր այժմ յիշեցի.  
Չասեն զմիս անգամ գալուստն Յիսուսի,  
Որ կեանք և փրկութիւն է ամենայնի:

Եկեալ ի Խաթայու զօրքըն հեծելին  
Եւ դէպ ՚ի յարևելս չըեալ գընացին.  
Եւ ազգ մի բովանդակ զամէն գերեցին,  
Ջոր ի լեզուն հրեանց դալմուղ կոչէին:

Ջմանկունքըն գերելոցըն վաճառէին,  
Յորմէ առեալ տըղայ մի Սըխիթարին,  
Տանէր խընամք նորա զինչ իւր զաւակին.  
Ապա դէպ ի յաշխարհըս մեր դիմեցին:

Ըգծով և ըզցամաք նոքա կոխեցին  
Եւ յԱլանաց երկիրըն ժամանեցին.  
Մատնեցին ըզտղայն երկրի իշխանին  
Եւ նա ընչիւք իրովք զընեաց երեքլին:

Բերեալ ի բուն քաղաքըն Մըխիթարին  
Զքարի մանուկն ընտրեալ և զառաքինին,  
Հանեալ հաւանեցաւ կամօքն իրային,  
Ասաց թէ՛ «Մըկըրտիմ յանունն Յիսուսին,

Հաւատամ ես ի հայրն և յորդի նորին,  
Երկըրպագեմ հոգովս հոգոյն ճշմարտին՝  
Մի կամք և մի բնութիւն, որ ոչ բաժանին»:  
Զանունն Աստուածատուր նորա կոչեցին:

Ոսաւ լեզու և գիր նա վաղվաղակի,  
Ծնորհօքն աստուածատուր և հոգոյն տեղի.  
Անձամբն էր վայելուչ, բնութեամբըն՝ բարի,  
Տեպեամբըն՝ գեղեցիկ և զարմանալի:

Զընթացս երանելոյն տեսեալ սատանի,  
Զհաւատն, որ առ Քրիստոս զգընացսըն բարի,  
Լինէր հեղձամղձուկ առաջին չարի,  
Բորբոքեաց ըզնախանձ դառնութեան բոցի:

Ի չար նախանձ վառեաց զազգն Իսմայելի,  
Թերևս յափշտակէ զժառայն Յիսուսի.  
Դըրդեաց ի բարկութիւն զորդիսն Հագարի,  
Ասեն ըզմանկանէն՝ Զաւակ է թուրքի:

Գնացեալ առ ամիրայն չարախօսեցին.  
Եկեալ՝ զԱստուածատորն յատեան կոչեցին:  
Չարագործ պղծասէրքն և որդիք ժանտին,  
Նըման եքրայական տիրասպան գընդին:

Ասեն. «Դու՝ մուսուլման յազգէ Մահմետին,  
Ի բաց թող ըզՔրիստոս և զհաւատ նորին,  
Թէ ոչ՝ տանջենք ըզքեզ սաստիկ ւ ահագին»:  
Ասաց. «Ես ոչ փոխեմ զլոյս ընդ խաւարին»:

Ետոր նա համարձակ ըզպատասխանին,  
Թէ՝ «Քրիստոս է աստուած ւ ես ծառայ նորին»  
Ինձ ուրանալ զՔրիստոս է անհընարին  
Եւ կամ հընազանդել ձեր փեղամպարին:

Պատրաստ եմ մեռանել վասն անուան նորին,  
Այնմ, որ եքարձ ըզփուշ մեր պատուհասին,  
Էարք նա ըզքացախ խառնեալ ընդ լեղին,  
Եհեղ զարինն իր սուրք ի քառաթևին»:

Բազում թախանձանօք զնա աղաչէին  
Քաղցրութեամբ խօսելով, և ոչ կարացին.  
Կապեցին զձեռս ի յետս և հարկանէին,  
Տանէր նա խընդութեամբ տանջանաց նոցին»:

Յաւորս ձըմերայնոյ զնա մերկացուցին,  
Բերեալ գետն ի ներքոյ ստոին անցուցին,  
Որպէս սուրք քառասունքն ի Սերաստիին,  
Անցաւ ընդ հուր և ջուր ըստ երգոյ Դաւթին»:

Ապա ի թիկնամէջըն հուր վառեցին,  
Հրրով ըզհողաթափն ի յտն ագուցին,  
Սրրով գրոլոր մարմինըն ծակոտէին  
Եւ կայծակունս հըրոյ ի յերկու ձեռին:

Ոչինչ նա համարէր զկսկիծն ահագին,  
Սիրով էր նա վառեալ ի յոյսըն վերին.  
Արիաբար եկաց դէմ Բէլիարին,  
Եղև նա պատարագ հօրն երկնատրին:

Բերեալ ըզքարեյաղթ վըկայն Քրիստոսի  
Ետուն զնա ի մօլլան, զի օրէնք ուցի.  
Ասեն՝ Մանկութիւն է դորա փոխելի,  
Դառնայ ի Քրիստոսէ սա վաղվաղակի:

Մօլլա գփթ բա փսար. «Ա՛ սէիտզատայ,  
Մաքուն գումըռահի, բամիան պիայ»<sup>1</sup>:  
Ասաց թէ՛ Իմ աստուածն ըստոյգ է՛ Յիսայ,  
Զի՛ չար ու չի՛ թատպիր, քի շաւամ ճողայ»<sup>2</sup>:

Մօլլա գփթ քի. «Պիայ պըշաւ մուսուվման  
Պըխաւան թու փէշի մա քըթապ ու դուրան»<sup>3</sup>:  
Ասաց թե՛ Սընոտի է քոյդ և ունայն,  
Պէմաստի մաքուն, ճըհել ու նատան»<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Մօլլան ասաց տղային. «Ո՛վ սէիդի որդի,

Մի մոլորմիր, մեջտեղ արի» (պարսկ.):

<sup>2</sup> Ի՛նչ ճար, ի՛նչ հնար, թե կրածանվեմ (պ.):

<sup>3</sup> Մօլլան ասաց, թե «Արի դարձիր մուսուվման,

Կարդա դու մեզ մտ զիրք ու դուրան» (պ.):

<sup>4</sup> Անմտութիւն մի արա, ո՛վ հիմար ու տգետ (պ.):

Մօլլա տէտի. «Օյ կիլ փեղամպարայ եար,  
Կալուրլարուն տինի կօնկուլտան չըխար»<sup>5</sup>.  
— Ի քեզ սաստէ Յիսուս, մէնտան իսրա[ր] վար,  
Սալիպ մէ փարըստամ, մաճնուն պէխապար<sup>6</sup>:

Սովով և ծարաւով յոյով տանջեցին,  
Ի հուր և ի ջուր ըզնա անցուցանէին.  
Ամիսս ութ անխնայ զնա չարաչարեցին,  
Ծարծել ի հաւատոցն զնա ոչ կարացին:

Եկեալ ժողովեցան չարքն ի միասին,  
Պատեալ շուրջանակի և քարկոծէին,  
Քան զշուն և ըզգազան զնա գիշատէին,  
Էառ զվախճան անդէն ի յասպարիսին:

Ամաց էր տասն և ութ վրկայս գովելի,  
Որ վկայեաց անուան տեսոն Յիսուսի,  
Էր թիւն ինն հարիւր վաթսուն և ութի  
Յորժամ Աստուածատուրըն նահատակի:

Առ մեծ րաբունապետն ճառս այս յարմարի,  
Որ և անուն նորա Գրիգոր յորջորջի.  
Սորին սպասաւորէ և աշակերտի՝  
Գրիգորիս, մականունս է Աղթամարցի:

---

<sup>5</sup> Մոլլան ասաց. «Արի մարգարեին բարեկամ դարձիր,  
Անհավատների կրոնը սրտիցդ հանիր» (թուրք.):

<sup>6</sup> Ես պնդում եմ,  
Խաչ եմ պաշտում, ով անտեղյակ խեմթ (թ., պ.):

## ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԽԱՔԱՅԵՑԻՈՅՆ

Ըստ (անուան երգողին ի Գրիգորիս Կաթողիկոսէ)  
Աղթամարցոյ

Գովենք ըզվրկայն արի,  
Զմանուկըն Խաթայեցի,  
Եղև անհատակ բարի,  
Քաղաքըն որ Բաղէշ կոչի:

Քարունոյն երկնի 'ւ երկրի,  
Եղև ան տուն և տեղի,  
Վառեալ սիրովն Յիսուսի,  
Ի հուր և ի ջուր տանջի:

Ի փրշոց անր վարդ վառի,  
Արմաւ և շուշան ծաղկի,  
Բուրէ հոտ ըսքանչելի,  
Լընու ըզքիմս ամենի:

Գունով ակըն գովելի,  
Սուտակ, դահանակ, ոսկի,  
Եկեալ ի լերկրէ հեռի  
Պարգևս մերս լեկեղեցի:

Որդիք Հագարու զարմին,  
Եկեալ ըզքեզ ըմբռնեցին,  
Այնչափ եւ սաստիկ հարին,  
Շարժել զքեզ ոչ կարացին:

Բամբք այլազգեաց գընդին,  
Հարեալ զքեզ ի վայր արկին,  
Կարկուտ յանխընայ ածին  
Նոր բողբոջացեալ ծաղկին:

Ի ժամանակիս վերջին,  
Դու նոր նահատակ փըրկչին,  
Կոխեցեր զգըլուխ չարին,  
Մըտեր ի հրեղէն արփին:

Սա ի բարբարոս ազգէ,  
ԸզՔրիստոս սատուած ասէ,  
Կամաք զարիւն իւր հեղէ,  
Զթըշնամին յամօթ առնէ:

## 5

### ՏԱՂ ՎԱՐԴԻՆ ԵՒ ՊԼՊՈՒԼԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՅՈՅ ԱՍԱՅԵԱԼ

Ծաղկունքն ասեն՝ Հերի՛ք արա,  
Քանի՞ կանչես վարդին վերայ.  
Կահ ու պէկահ ձայնըդ կուգայ,  
Ի մեր պաղչից ել ու գընն:

Քանի՜ առնէք դուք ինձ յատապ,  
Սիրոսս ի սիրու եղեր քապապ,  
Ես կու մաշիմ վարդին սապապ,  
Իմ հալս առանց իրն է խարաֆ.

Գամ իջանեմ վարդենոյն տակ,  
Չկանաչ տերևն առնեմ ինձ յարկ.  
Ի սրբոսիս մէջըն կայ կըրակ,  
Թըռչիմ և գամ երագ-երագ.

Ի քեզ նայիմ աչօք անթարթ՝  
Նա փարատի զինչ կայ հասրաթ,  
Գեղեցկութիւն դրախտին և զարդ,  
Կարօտ եմ քեզ ամենայն մարդ:

Վարդըն կասէ՝ Պլպուլ, երգէ՛.  
Քաղցըր ձայնի եղանակէ.  
Ով որ ըզքո ձայնըդ լսէ,  
Նա հիանայ, զմեզ երանէ.

Ով նենգութեամբ առնէ քեզ նագ,  
Թող իր ատրքն դառնա նրագ.  
Ամրի թութայ պաշաթ դըրագ,  
Պլպուլ, բըքաւ թու բա աւազ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Զո կյանքը թող լինի երկար,  
Սոխակ, խոսիր դու երգով (պ.):

Մորդան քրֆտայնդ,<sup>2</sup>  
Քանի՞ կանչես, մէկ պահ լրո՛ւ.  
Ասաց թէ՛ Սէրըն կու նեղէ,  
Որ վրայ վարդին աշըղ եղէ:

Սիրտըս չկայ հետ իւրըն հերթ,  
Քանի խոցէք ւ ասէք թէ՛ Ե՛րթ.  
Հողմն շարժէ ըզվարդին թերթ,  
Նա ի դողման դառնայ իմ լերթ՞:

Այլ չի մընաց քնաւ յիս ուժ,  
Երբ հեռանամ, նա չունիմ ժուժ,  
Ինձ օր մահու լինի և գուժ,  
Հոտըն վարդին է սըրտիս բուժ՞:

Զօրըն կենամ յերերմընի.  
Քունս է հատեր ի գիշերի,  
Աղաղակեմ արտասուալի,  
Յայգուս չերթամ ես այլ տեղի՞:

Ըռանկ վարդին որպէս ըզլալ,  
Տեսաւ պլպուլն եղաւ պէհալ.  
Անմահութեան հոտըն բուրեալ,  
Նա ի սիրուն եղև արբեալ:

Վարդըն տեսաւ զպլպուլն ուրախ,  
Որ ձայն կածէր ինքըն անահ.  
Ծիծաղեցաւ վարդըն մէկ պահ,  
Պայծառացաւ տիպըն քան զջախ՞:

<sup>2</sup> Հավքերն ասացին, ո՛վ տխակ (պ.):

Վարդըն կարմիր գունով վառած  
Նա շահ պլպուլըն ձայն էած,  
Հոտոյն եղև խև ու հարբած.  
Վարդի տեսուն էր կարօտաԾ:

Պլպուլն ասաց՝ Ես եմ առակ,  
Թոշունքն կառնեն ըզիս կատակ,  
Վարդըն չնայիր ի յինքն յերակ,  
Նա ի յաչացս ելաւ վտակ:

Զօրն ի ճըղոյն լինիմ ի կախ  
Եւ միշտ դիտեմ զվարդին ըռահ,  
Զով որ տեսնում՝ նա ինձ է մահ,  
Զվարդըն քաղեն տանին անշաւ:

Վարդն է զգեցեալ գունով հանդերձ,  
Ուրախանամ, որ լինիմ մերձ.  
Կասէ՛ Սիրով դու առ իս դարձ,  
Զահն և զերկիւղն ի յիսնէ բարձ:

Կասէ՛ Մի առնէր դու ինձ հետ խաղ,  
Ես եմ կարմիր որաղ-որաղ,  
Տօղն իջանէ յամպէ պաղ-պաղ  
Վերայ վրանիս իմոյ խաղա՛լ:

Վարդըն կասէ. Զայնըդ քաղցր ամ,  
Յիրիկվընէ ես եմ հարբած,  
Ծաղկանցն ամէն եմ սար ու թաճ՝  
Պայծառ գունով լուսանանամ:

Ճըրեաթ կառնէ ինքն յամէն ժամ,  
Զկանաչ փարտաս յետ կո բանամ,  
Ըզքեզ տեսնում ւ ուրախանամ  
Ի այլ ի քեզնէ ոչ հեռանամ:

Պլպուլն ըզվարդն կո գովայ,  
Յիրիկվընէ ձայնըն կո գայ,  
Ծաղկունքն ամէնն են քեզ ծառայ,  
Դու թագաւոր և տէր նոցաՅ:

Պլպուլն զարթնի կէս գիշերին,  
Վարդըն փթթի յառաւօտին.  
Յօղն իջանէ ի վերայ թփին՝  
Պայծառանայ գեղըն վարդին:

Ծուրջ ու բոլոր իրենըն փուշ,  
Հոտըն բուրէ վարդին անուշ.  
Թըմբաւ պլպուլն, եղև պէուշ,  
Ասաց՝ Ի՞նչ ժամ եղէ քեզ տու՛ծ:

Եմուտ պլպուլն ի վրան վարդոյ՝  
Թ՛ Ես եմ գանգատ յամէն մարդոյ.  
Բեր համբուրեմ ըզտիպն քո,  
Որ դուրանայ ցաւըս մարմննոյ:

Ես չունիմ սէր հետ քեզ վաղուց,  
Զգալդ ու զգնալդ քեզ ո՛վ ուսուց.  
Դու ես աղուոր և վայելուշ,  
Է՛ր կո խոցես զիս առանց սու՛շ:

Զտի ու զգիշեր եմ ես ի տապ,  
Եղէ անշարժ որպէս ի կապ,  
Լափած սրտիս ես դու շարապ,  
Որ սևացել է քան զարաՊ:

Զայնէ պլպուլըն անամաշ,  
Ասէ՛ Կենայ վարդըն կանաշ.  
Ծաղկունքն ամէն էլնուն յառաջ  
Այն զօրաւոր արքային քաջ:

Դու պատուական աղուոր ու թառ,  
Լեզու չկայ առնէ քեզ ճառ,  
Պայծառ գունով ես միշտ ի վառ,  
Քո թշնամոյն սիրտըն քան զասի:

Ի հետ վարդին քանի՞ դատիս,  
Սիրով նորա դու միշտ մաշիս.  
Երբ նա քաղցրիկ նայի ի յիս,  
Զըւարճանայ սիրտս և հոգիՍ:

Ես կու այրիմ միշտ կըրակով,  
Թէ չտեսնում զվարդըն վրանով.  
Է՛ր կու մերժէք զիս կարօտով,  
Ես կու գովեմ զվարդըն ձայնով:

Կասէ՛ Չկայ ի քեզ արատ,  
Վրայ աշխարհիս կենաս անհատ,  
Ի փորձանաց կենաս ի զատ,  
Խանաշ վըրան և կարմիր այՏ:

Յամէն սապաճ որ լուսանար,  
Պլպուլն ի վարդն ի սալամ գար,  
Ղումրին քաղցրիկ եղանակեր՝  
Զվարդն և զպլպուլն ուրախ առնէր։

Հետ պլպուլին արա զըրուց,  
Երբ որ գայցէ ինքն ի դըրուց.  
Ուրախութեամբ ըզքեզ քընուց,  
Զնա որոշէ ի յայլ հաւուծ։

Վարդն ի պլպուլն երբ խօսեցաւ,  
Այլ տրտմութեան հոգ չի տարաւ.  
Քան թէ խընդաց ւ ուրախացաւ,  
Զի իւր սրտին սէրըն լըցաւ։

Եղև պլպուլըն թևաթափ.  
Թէ՛ Ե՛րբ ամեն ըզվարդն ի յափ,  
Քանի՛ ֆըղան կանչեմ անչափ,  
Ի դէմ վարդին հարկանեմ ծափ։

Ի ձեր սըրտիդ դուք սէր չունիք,  
Վասն այն զիմ ձայնըս չընդունիք-  
Վարդըն կասէ՛ Մի աներ, հերի՛ք,  
Ես կու կանչեմ ւ ունիմ կարի՛ք։

Գերի Գրիգոր անյիշելի  
Եւ անպիտան Աղթամարցի,  
Սէր աշխարհիս սուր երկասայրի՛,  
Հոգիս նովաւ վիրաւորի։

Աստուածատուր Մեծոփեցի  
Յիսէն խնդրեաց, և ես գրեցի.  
Դուք ասացէք սրբտով ի լի,  
Ինձ և նորա՝ տէր ողորմի:  
Թըլին հայոց ինն հարիւր  
Երթանասուն 1 երկու այլ իւր  
Հագարացիք օրհնօք թիւր  
Չագգըս խանձեն որպէս ըզհուր:



**ԳԱՆՁ ՈՒՌԸՆԿԱՐՈՒ ՍՈՒՐԲ ԵՇԱՆԻՆ**  
**Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ**

Գերակատար աստուած համայնի,  
Տէր արարիչ երկնի և երկրի.  
Որդին ծընունդ, բըխումն է հոգի,  
Հարթ հաւասար անձինք եռակի:  
Մի քան զմի յառաջ ոչ ասի,  
Ոչ մին պահի կամ բըթթել կամի.  
Թէպէտ անձինք յատուկ քարոզի,  
Բայց բընութեամբ անբաժանելի:  
Չի հայրն է լոյս, լուսոյն լոյս որդի,  
Եւ փառակից ճշմարիտ հոգի:  
Ծնունդ է հօր միածին որդի,  
Չէ արարած ըստ Արիստի:  
Հոգին աստուած է միշտ կենդանի,  
Անհատաբար ի հօրէ բըխի.  
Թանկի ստեղծեաց զբանակքն անմահի.

Զգունքն հրեշտակացն ի հրեղէն արփի:  
Ստեղծեաց ըզմարդն ըստ իւր պատկերի  
Եւ զարդարեաց շնորհօքն եօթնարփի.  
Յեղեմական դրրախտըն փոխի,  
Արքայօրէն ի գահոյս բազմի:  
Պատուէր առին վասն մի պըտղի,  
Չի ճաշակել առանց հրամանի.  
Չարեաց գիտակն ի յօձըն բունի.  
Եւ ընդ նախահօրըն մեր նա խօսի:  
Ք՛ ով ճաշակէ յայն ծառոյն պըտղի,  
Արքայօրէն նա աստուած լինի,  
Եւ ճանաչել ըզչարն ու զբարի.  
Նըման լինել ձեր աստ ածողի:  
Եւ խաբեցաւ կինն ողորմելի,  
Քեղով պըտղոյն աչաց հաճելի.  
Կերաւ Ադամ ձեռօքն Եւայի  
Եւ յեղեմական դրախտէն հալածի:  
Երկըրպագենք խաչին Քրիստոսի  
Ազատարար համայնից ազգի: Աղաչենք:

Բամիցըս տէր նախնոյն արարող  
Նա բարկացաւ, ասաց. Դարձ ի հող,  
Քանզի չեղեր, ասէ, դու կարող  
Կալ հակառակ եւ չարին յաղթող:  
Տառապանօք տանջիք զերդ ըզգող,  
Դրախտին եղեալ հրեշտակ պահեցող,  
Եւ սերովքէք սուսերօք շրջող  
Եւ հողեղէն բնութիւնս մեր կիզող:  
Ի յուրբաթու վեց ժամըն կերան,

Ըզմահաքեր պրտուղըն անպիտան,  
 Եւ վեց ժամուն վեց հազար անցան,  
 Տառապանօք նոցա տանջեցան:  
 Մինչ առաքէ հայր յերկիր ըզքան,  
 Էտ մարմին գայ ի չարչարան.  
 Ելեալ մարմնով ի փայտըն խաշին,  
 Խոնարհեցաւ ի հող և ի տապան:  
 Փառօք յարեալ տէրն անապական,  
 Առաքելոցն եղեալ յանդիման.  
 Յարոյց ընդ իր զմահուն պարտական  
 Ծոխ և փարթամ ի յերկինս եհան:  
 Դասք երջանիկք գունդքըն սրբազան  
 Քարոզք բանին ի յաշխարհս ելան.  
 Որք ի նոցունց ըզքան ընկալան.  
 Եւ յորդին աստուած հաւատով դարձան:  
 Նոր պատուիրան առին և նըշան,  
 Դրոշմ և օրէնք, ի կըոոց դարձան.  
 Որպէս զԿողոդիէ Հոռոմոց արքայն,  
 Պատրոնիկէ կինն իր պատուական:  
 Յառաքելոյն Պետրոսէ ուսան  
 Զգալուստ փըրկչին և մըկըրտեցան:  
 Տնօրէնութեան տեղաց ցանկացան,  
 Եւ տիրածին կուսին մաքրական:  
 Եկեալ դըշխոյն սիրով ջերմական  
 Երկըրպագէր տեղաց սըրբութեան.  
 Խընդրեաց ըզխաշըն տէրունական,  
 Որ կենսատու է ազգի մարդկան:  
 Դուստր արքային էտ անդ վաղճան,  
 Ծնորհօք խաշին դարձաւ ի կենդան:

Երկրպագեմք խաչին Քրիստոսի  
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Ի փրկական փայտէն հրաշանաց  
Դըշխոյն սիրով, հաւատով խընդրեաց,  
Տեառնեղբօրէն ըզմասն աղերսեաց.  
Ըղծին եհաս և փափաքանաց:  
Տարեալ կայսերն ըզնա ընծայեաց  
Չոր հաւատով նա երկրրպագեաց.  
Երեք հարիւր ամ անդէն մընաց,  
Յազգ և ի տունըս թագաւորաց:  
Ի յարմատոյն բուսեալ յայն բարեաց  
Սուրբն Հոփսիսիմէ կոյսն ի յազատաց,  
Առեալ թօշակ իրն ի հայրենեաց,  
Չաստուածընկալ նըշանըն կենաց:  
Յարևմտից արև մեզ ծագեաց,  
Սուրբ ընկերօքն իր ի Հայս դիմեաց.  
Եկեալ հասեալ կոյսն ի գովելեաց  
ՅԱրքական գաւառին Մոկաց:  
Ռներ ընդ իր գըրշանըս կենաց,  
Որ զարարածըս լուսաւորեաց.  
Զմինըն պարգևս տըրեալ նա Մոկաց,  
Զմիսն ի Վարագ տարեալ ամփոփեաց,  
Գիող ի Կրճաւ խաչըն դադարեաց,  
Դեքն յաղբերէն իսկոյն հալածեաց.  
Մանկունքն, որ խեղ յոտից 'ի ի ձեռաց,  
Բըծըշկեցան խաչիւրն շնորհաց:  
Երկրրպագեմք խաչին Քրիստոսի  
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Գովեալ նշան փառացն Յիսուսի,  
 Մահուամբ ըզկեանքն ծածկեալ յինքն ունի.  
 Որ յերգագիր իմաստնոյն տառի  
 Հոգիանիրք հոսանաց շնորհի:  
 Նախանըկար դիտմամբ հրաշալի  
 Զքեզ, փայտ կենաց, ասաց ամենի.  
 Օրհնեալ է փայտ, որով կատարի  
 Արդարութիւն ի վերայ երկրի:  
 Կեցեալ սուրբ խաչն յիշխանաց յերկրի,  
 Ծառ ծամանակ առնէր սքանչելի.  
 Ոմն երկիւղած և առաքինի  
 Սպասաւորէր սրբոյն նըշանի.  
 Հրեշտակն ազդեաց տեսեան գիշերի,  
 Գընալ յերկիրըն Քաջբերունի,  
 Բերեալ զգանձն անկողոպտելի,  
 Գըտեալ ձորակմանդ ծառ մի ուրի,  
 Նըշանըն սուրբ անդէն ամփոխի:  
 Ոմեք չասաց այրն այն ցանկալի  
 Թէ ուստի գայ կամ զինչ նա ունի.  
 Մերձեցաւ օրն իրոյն վաղճանի,  
 Սուրբ երջանիկ հօրն երանելի.  
 Եցոյց զտեղիք սրբոյն Նըշանի,  
 Զոր ամփոփեալ էր յուրի ծառի:  
 Զտեղն արարին ուխտ ըսքանչելի,  
 Ուղընկարու սուրբ Նըշան կոչի:  
 Երկըրպագեմք խաչին Քրիստոսի  
 Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք

Ունող յաղթութեան զօրեղ սուրբ Նըշան.  
Դու քառասար սուներ սըխրական,  
Դու խորտակող գընդին դիական,  
Գառին աստուծոյ ճըշմարիտ սեղան:  
Դու դըրատեալ պանծալի Նըշան:  
Սխրասարաս անայթաքական,  
Դու լաստափայտ ապաւիճութեան  
Յալեաց մեղաց պահես անասան.  
Դու նազելի անպատում Նըշան,  
Ուրախութիւն եւ ազգի մարդկան.  
Խոստովանեալ եւ խորհրդական,  
Կենաց Կարապետ յաւուր գալըստեան.  
Ի քեզ ձօնեցաւ բանըն հայրական,  
Ի քեն սարսի գունդ բելիարեան.  
Քեւ ճանապարհք ի յերկինս քացան,  
Մարդ և հրեշտակք խառնեալ միացան.  
Երկիւղածաց եղեր դու նըշան,  
Զի արասցես չարին աղեղան:

Բարունոյն դու սուրբ դիտարան,  
Մեզ՝ ծառ կենաց և նոյեան տապան,  
Տուն աստուծոյ, սանդուխք յակոբեան,  
Եւ Մովսէսի զօրեղ գաւազան:  
Դու ահարկու սուկալի նըշան,  
Հզօր աշտարակ անկասկածական.  
Առ քեզ պաղատիմք մեք ամենեքեան,  
Ուղընկարու յաղթող սուրբ Նըշան:  
Հրաշագործես դու միշտ անխափան,  
Քաջքերունեաց պարծանաց նըշան.

Ախտածետաց դեղ առողջութեան,  
Ուրընկարու գովելի Նըշան:  
Նեղեալքն յայսց անկեալ առ քեզ գան,  
Քաջքերունեաց պատուելի նըշան.  
Արա ըզդեւքն հալածական,  
Ուրընկարու ցանկալի Նըշան:  
Բազկատարած կան ամենեքեան,  
Բեկեալ սրտիք կան քեզ յանդիման:  
Երկըրպագեմք խաչին Քրիստոսի  
Ազատարար համայնից ազգի: Աղաչեմք:

Ի քէն հայցեմք միածին որդի,  
Ունիմք բարեխօս զխաչ քո սքանչելի,  
Ներկեալ արեամբբոյ կենարարի.  
Յարարածոց միշտ երկըրպագի:

Սա զէն և սուր է անյաղթելի,  
Հարեալ ի սիրտըն Բելիարի.  
Ի քէն ելցէ շնորհքն յաշխարհի,  
Զի տէրն աստուած ի քեզ բընակի.  
Փըրկիչն քեւ առ մեզ իջանի,  
Յաւք և ցընորք ի մէնջ հալածի.  
Ժողովելոցըս տէրն ողորմի,  
Որք են եկեալ տունըս Խաչի.  
Կատարեացին խընդիրքն ամենի,  
Օրհնեն գտըտողն այնըմ շնորհի:  
Յիշեա, եւ եւս, զան(ձիմս):

Սուրբ եւ մաքուր կոյս երանուրի  
Անախտ անբիծ մաքուր հայելի,

Դու ծովային ակըն մարգարտի,  
Եիլատայ պատուական ոսկի:

Անփորձ յառնէ ծընող Յիսուսի,  
Կոյս Մարիամ՝ պարծանք Եւայի:

Խըրախացիր, կոյս երանուհի,  
Հօր հաւա(սա)ր եւ դաւանելի:

Թագաւորին եւ իջման տեղի.  
Ոստի երկինք՝ ի երկիր սասանի:

Արձանունակ լեառներն յերկրի  
Զոր Դանիէլն յառաջ տեսանի:

Մանանային սափոր սոսկայի,  
Կընքեալ տօմար անընթեռնի:

Աղբիր կընքեալ ջըրոյն կենդանի,  
Սէգ եւ գրգաթ երկնային ցօղի:

Րոտենք աղերսի ի քէն սըրբուհի,  
Զի գիր մեղաց մերոց ջընջեացի:

Յօղ արտասուաց յորդաբոյս հոսի,  
Քո միածնի կամքն քաղցրացի:

Ի գալըստեան ատրն ահեղի,  
Յորժամ գոչէ փողըն հրաշալի,

Մեզ բարեխօս և միջնորդ բարի,  
Ընդ քեզ և խաչըն համաձայնի:  
Զայն Յովանու, Պրսակըն նախնի,  
Պարթև Գրիգորըն Պահլաունի,  
Գանձիս խնդրողի մասն ի պարգևի,  
Վարժապետին մեծին Գրիգորի:  
Մատիր յաղերս դու կոյս սրբութի,  
Խաղաղութիւն շնորհել աշխարհի: Ողորմեա:

7

## ՄԵՂԵԴԻ ԱԶՆԻԻ

### Խաչին Ուղղկարու

Խոստովանիմք զՄիածին  
Բարձրեալ ի խաչափայտին.  
Ետ մեզ նըշան լուսածին,  
Որով յաղթեմք բանսարկուին:

Այսօր տօնեմք սուրբ Խաչին,  
Աստուածընկալ Նըշանին,  
Որ է բացող դրոսխտին:  
Գալոց է յաւուրըն վերջին:

Զըքնաղ լուսով զարդարին,  
Ամպօք ընդ առաջ թըռչին  
Երկրպագութըն Խաչին,  
Խաչեալ սուրբ թագաւորին:

Ի յայն ահեղ ատենին  
Տօնողքս ի քեզ ի յանձին,  
Յանցանք մեղաց մեր ջրնջին,  
Դասեալ ընդ սուրբ երամին:

Ի հօրէ խոնարհեալ իջանի  
Ծոցածին միածին և որդի.  
Անմարմինն ի մարմնի երեսի,  
Եւ կամաւ ել ի կառքս Խաչի:

Խափանեաց զգօրութիւնը չարի,  
Եւ քարոզս առաքեաց աշխարհի.  
Զաշակերտս իւր ընտրեաց սքանչելի.  
Եւ մեհեանքըն կոոց խափանի:

Նոր օրէնք և հաւատք հաստատի,  
Ընդ բոլոր արարած ըսփրոյի.  
Գընացեալ Ծըմաուն Պետրոսի  
Ի քաղաքն ի Հըոոմ հանդիպի:

Դըշխոյն սուրբ և արքայն հաւանի,  
Հաւատան ի Քրիստոս կենդանի.  
Եկ ի տես սուրբ տեղաց տեհչալի  
Եւ ետես ըզծընողն Յիսուսի:

Բախացեալ դըշխոյին ի յոգի  
Եւ խընդիրք արարեալ սուրբ Խաչի,  
Զոր տեսեալ ըզհրաշքըն յայտնի,  
Մասն առեալ և ընտիր պիտանի:

Որպէս գանձ և պարգև ըստանի.  
Եւ մընայ սուրբ Նըշան յարքունի.  
Մինչ ի կոյսըն չքնաղ նագելի,  
Հոփսիսմէ հարսնացեալ Յիսուսի:

Յարքայէն ամբարիշտ նա փախչի,  
Ընկերօքն իր ամբիծ ի մարմնի,  
Եկն յերկիրըն Մոգաց գաւառի  
Եւ ետ պարգև ըզՆըշան տէրունի:  
Ասացեալ Գրիգորիսըն գերի,  
Որ կապեալ կայ մեղօք ի տոռի.  
Հրամանաւ րաբունոյն Գրիգորի,  
Զնա առնէք յիշելոյ արժանի:  
Եղանակողք գանձիս և տաղի,  
Ժըրաջան կանգնողացոյ յատենի,  
Միաբան դուք ասէք ողորմի.  
Մըկրտիչ անարժան գըծողի:  
Եւ գանկեալքն ի յայտոցըն չարի  
Գըթասցի ողորմածք ամէնի,  
Նըշանաւ սուրբ խաչիս բըժըշկի  
Եւ օրհնեն ըզտըտողըն շնորհի:

#### ՅԱՐԿՈՐԵՎ Է

Վառեալ լուսովն աստուածային  
Փայտըն կենաց սրբոյ խաչըն  
Թագ և պըսակ նախաստեղծին  
Եւ խորտակող դիւաց գընդին

Ան քեզ եկեալ եմք վըշտագին,  
Մաղթեմք զՆշանդ աստուածային  
Ի քեզ գեներալ գառն երկնային  
Մածեալ արեամբ Կենարարին:

Րամեալ ժողովս ի միասին  
Հայցեմք քէն կողկողագին,  
Զի գիր մեղաց մեր ջընջեացին  
Ընդ երանեալ աւագակին:

Գուորն մըտից դու երկնային  
Եւ կարապետ յօրըն վերջին  
Երկըրպագութըն քո քերկրին  
Լուսագգեստեալք եւ պըսակին:

Ամենագօր Նըշան փրկչին  
Երկըրպագեմք քեզ ի գետին.  
Զի դու բարձող ես արարչին  
Մաքուր սեղան երկնից հացին:

Նորոգ ձայնի ըսքանչելին  
Օրհնեմք զՆըշանդ տէրունի,  
Առողջութիւն տաս հիւանդի,  
Լընու գփափաքըն ամէնի:

Աստ մեզ պարծանք ի յաշխարհի  
Ըստ առաքելոյն Պօղոսի  
Ի միսանգամ օրըն վերջի  
Գու բարեխօս միջնորդ բարի:

**ՆՈՐԻՆ**  
**ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՂԹԱՄԱՐՑՈՅ ԱՍԱՅԵԱԼ**

Մարմինս ըզհոգիս զրկէ  
 Եւ պահէ զօրըն լալական,  
 Դատաւորին լալով ասաց,  
 Թէ՛ Արա ուղիղ դատաստան:

Աստուած երբ ըզմեզ ստեղծեաց  
 Եւ ի քեզ արար ապաստան,  
 Թէ դու իրաւունք արա,  
 Որ սոքա լինին միաբան:

Դատաւորն անիրաւ էր գեմ,  
 Ոչ առներ ուղիղ դատաստան,  
 Ահ ի աստուծոյ չունէր,  
 Անպատկառ ի յորդոց մարդկան:

Եղուկ զիմ այրի հոգիս,  
 Ծար չունի քան զանմահ փեսայն:  
 Միայն է դարձեալ գերիս  
 Ընդ հեռացեալսըն վայրենական:

Ի մեղաց իմոց տանջիմ  
 Եւ կենամ միշտ ի յերերման,  
 Հոգիս ի մարմինս կուլայ,  
 Հակառակ են՝ չեն միաբան:

Ոչ դուր, ոչ դադար առնում,  
Այլ շրջիմ ես թափառական,  
Ոչ ունիմ տեղ'մ ես դարան  
Կամ ատուր մ' երկու ապաստան:

Գրիգորի'ս, ճարակ արա  
Եւ զմեղաց աղուն ի քէն լուա.  
Է'ր անհոգ ի քուն կենաս  
Յանգատը աշխարհիս վերայ:

Ահա օր մահուն կուգայ  
Գի'տ բժիշկ և ճար քեզ արա,  
Յէգուց հրափրակըն գայ  
Եւ ասէ քեզ՝ Աստի գնա':

9

**Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ**

Քանգատ առնեմ սիրով քեզ,  
Թէ միտ դընես ու լըսես,  
Զծառայս քո անտես չառնես,  
Զխորհուրդ սրբոսիս յայտնեմ քեզ:

Րարունաբար խըրատես,  
Զյիմարս ի յիմաստ ածես,  
Զցրուեալս դարձեալ ժողովես  
Թևօքրդ քո ամփոփես:

Ի քէն թէ զիս բաժանես  
Ի այլ զքո գերիս ոչ յիշես,  
Յիճէն գերեսորդ շրջես,  
Զիա՛րդ կեանքան կեանամ ես:

Գիշերըն մինչ ի լուս ես,  
Տապիմ և տոչորիմ ես,  
Վախես թէ մեռանիմ ես  
Ի քէն հեռի և անտես:

Որպէս ըզջոր գնամ ես  
Ի ի տեղ դադար չստնում ես,  
Ղարիպ կեցօք շրջիմ ես,  
Կեանքս է հարամ, թէ գիտես:

Րամից եղբարց պարծանք ես,  
Զամենեսեսան ըսփոփես,  
Ընդէ՛ր արիւր զիս անտես,  
Որ հանապազ տանջիմ ես:

Իմ կեանքս է դառն ու դիժար,  
Ողբամ ես միշտ 'ւ անդադար,  
Մեղօք եմ վիրաւորեալ,  
Անկեալ ի յախտ չարաչար:

Սաստիկ սրբով խոցեցայ  
Ի բանասրկուէն անխընայ,  
Յարատ նայիմ յարակայ  
Հոգիս կրրկին ախտանայ:

Էդրարք առ ձեզ պահատիմ,  
Թողութիւն խնդրէք վասն իմ,  
Բազում յանցանս ես ունիմ,  
Տարակուսեալ զի՛նչ լինիմ:

10

ՏԱՂ ԱՆՈՒՇ

Այբէն մինչև ի Քէն քե՛նէ գանգատիմ ես,  
Բաներս ես ո՛ւմ ասեմ, երբ դու լըսել չես.  
Գրիգոր մե՛ծ ըստունի՛, այս գըրեցի ես,  
Դուն առ ու քընճէ զիմ գանգատս ու տես:

Ես եմ տարակուսեալ ի յայս աշխարհիս,  
Զինչ բոյսն աշնանային գարնան մընամ ես.  
Էթէ բան մի դալատ ի գիրըս գըտանես,  
Ըստ քո սուրբ խորհըրդոյդ, որ զինքըն ջնջես:

Թեպէտ և կարդացող անուն ունիմ ես,  
Փամուս միտքս է մոլար, ինձ մեղ չի դընես,  
Ի քեզ եկի ծարաւ, թէ արթուցանես,  
Լուկ զգուրդդ թաքուցեր, թէ պապակիմ ես:

Խոնար հատու նըման անտուն գիտեմ զքեզ,  
Ծիծեռնեկի նըման լուկ բուն կու շինես,  
Կանաչ դաշտիդ նըման պայծառացեալ ես,  
Հրովդ անշիջելի ու այրեցայ ես:

Չայնի աղաչեցի, թէ այրեցայ ես,  
Ղօղեալ յինէն թաքեար, թէ մեռանիմ ես.  
Ծըրագ անշիջելի ի վառ էի ես,  
Մուծեր ընդ գրուանաւ, թէ շիջանիմ ես:

Յորդոր գետոց նըման անհուն գնայի ես,  
Նաւաբեկի նըման ընկըղմեցեր զիս.  
Շրթամբք աստուածային համբուրեցեր զիս,  
Ռոպէս ձուկըն ի ծովին՝ դու սընուցեր զիս,

Չըկայր մարդ հողածին, որ արգելոյր զիս,  
Պատկերըն նայելով կանգնեցուցեր զիս:  
Զեռեալ և ջերմացեալ քո սէրդ իմ սըրտիս,  
Ռամկական սերմանց քո սէրդ իմ աչերս:

Սիրամարգի նըման սաւառնացեալ ես,  
Վարդի թըփի նըման աթլաս հագեր ես.  
Տընկոցը խընկենոց անուշահոտ ես,  
Րամ դրախտին ծառոյն նըման ծաղկեալ ես.

Յօղեա՛ գանձրև կենաց, գարնան նըման ես,  
Իիծեալ դու պարծեցիս, թէ արեգակն ես,  
Փոխանակ քեզ նըման յաշխարհս չըգտայ ես,  
Քանզի յաքէն կու գամ՝ քեզ նըման դու ես:

**Ի ԳՐԻԳՈՐԷ ԱՂԹԱՄԱՐՑԻՈՅ ԳՈՎԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ  
ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

Գովեալ սուրբ հայր ոմն յարակայ,  
Գերագարդից յոյժ մերձակայ,  
Գընալ յօրէնս տեառըն խոկայ  
Գանձի գըրոց միշտ ճոխանաՅ:

Րենականա լըցեալ լուսոյ,  
Րամեալ տառից հընչման ճորոյ,  
Րաբունաբար 'ստ առաքելոյ  
Րամեալ զբոլոր անդամս մարմնոյ:

Իմաստութեամբ, մաքուր հոգով,  
Ի տընկողէն կարգեալ պըտղով,  
Ի վնասողէն ես յապահով  
Եւ գիտութեամբ՝ որպէս ըզծով:

Գոչեմ յականջո որպէս Կեփաս,  
Գեղապանոյն բնութիւնս որ այս,  
Գերընդունէ սիրով դու զայս,  
Որպէս փըրկիչըն քո զլումայՍ:

Որ եւ ըղձիք զսիրտս յօժարէ  
Ոստի տենչայ զքեզ տեսանէ,  
Որ ներգըրեալըս վկայէ,  
Եւ քեզ յայտնի կացուցանէ:

Ռոպէից մատամբըք կտուաի,  
Րամեալ ի մի գումար և յաի,  
Րակերտողին յորձան ի թաի,  
Րարուն վերնոցն ես դու անխաՓ:

Իսկ գըրեցաւ քանքս ի քարտի  
Յագգիս թըլոյ, որ ըստ հայի,  
Յինըն հարիւր եւթանասնի  
Երեք ընդ նա այլ շաղկապի:

Սուրբ և մաքուր հայր պատուական,  
Ազգի պարծանք և աննըման,  
Յոյժ փափաքիմ քո սուրբ տեսեան,  
Քո անառակ որդիս անքան:

Երգեմ ձայնիւքս նըւաղէ,  
Մոլորական եմ ի տանէ,  
Գրիգորիսէ սա գըրեալ է,  
Ի թափառնիկ ոմն աղքատէ:

## 12

### ՏԱՂ ԱՍՏՈՒԱԾԱԾԵՆԻՆ ՅԱՂԹԱՄԱՐՅԻ ԳՐԻԳՈՐԻՍԷ ԱՍԱՅԵԱԼ

Անեղին տաճար,  
Բանին քարերար,  
Գերագոյն գովեալ, տիրամայր,  
Դու յամէն լեզուէ:

Երգեսց Գարրիէլ,  
Զանեղն Մանուէլ,  
Էացաւ ի քէն, տիրամայր,  
Ընկալաւ մարմին:

Թագաւորին մայր,  
Ժառանգորդ եղար,  
Ի քո միածնէն հայցեա՛, տիրամայր,  
Լոյսն ի մեզ ծագէ:

Խնամօք խընամէ,  
Ծածկոյթի ծածկէ,  
Կեցո՛ ի չարէ, տիրամայր,  
Հովանաւորէ՛:

Զայնիւրդ ձայնէ՛,  
Ղամբարմամբ վառէ՛,  
Ծգնութեամբ պահէ՛, տիրամայր,  
Մեզ առաջնորդէ՛:

Յորժամ գայ յերկնէ,  
Նըստեալ դատ առնէ,  
Ծնորօք զմեզ քառէ, տիրամայր,  
Որպէս վայել է:

Զարն ի մէջ մերժէ,  
Պատուեալ պըսակէ,  
Զահ լուսոյ վառէ, տիրամայր,  
Ռահ, որ յերկինս է:

Սոսկալի սրովքէ,  
Վեհ բան ըզքրովքէ,  
Տօնողացս օգնէ, տիրամայր,  
Բամիցըս լսէ:

Ցան ի մէնջ մերծէ,  
Իիծեալ պըսակէ,  
Փրկեա՛ ի վտանգէ, տիրամայր.  
Քեզ փառք ի յերկնէ:

Ով եղանակէ,  
ԶԳրիգորիսն յիշէ,  
Զփոխարեանն առցէ հատուցման  
Նա ի Քրիստոսէ:

18

**ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԵՆԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՅՈՅ ԱՍԱՅԵԱԼ**

Արքային փակեալ պարտեզ,  
Մորենի վառեալ անկէզ,  
Գեղմն իմանալի և սեզ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Բարձող արարչին էից  
Նըմանեալ եղեր երկնից,  
Պարծանք ամենայն կուսից,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Գարնան առաւօտ եղեալ,  
Արեգակն ի քեզ ծագեալ,  
Ծող և ճառագայթ իջեալ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Դու լուսին յարև մերձեալ,  
Լոյսն արեգակնէն առեալ,  
Զխաւար գիշերին մերժեալ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Երևեալ ծաղիկ գարնան,  
Վարդ և մանուշակ, շուշան,  
Նարդոս ւ ի բըրբում նըման,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Զըրկեալն ի յանճառ լուսոյն  
Վասն օճապատիր պըտողոյն,  
Կեանք տըլաւ ի քէն նախնոյն,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Էրգ նոր օրհնութեան հընչեն,  
Հոյք հոգեղինացն երգեն,  
Հրճուեալ բերկրանօք պարեն,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ընդ անմարմնական զօրաց  
Յընծան դասք տեսանողաց,  
Զի կատարեցաւ առածն,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Թէպէտ կամ ի նինջ ւ ի քուն,  
Քայց ունիմ ըզսիրտս արթուն,  
Վառեալ կամ ի քո սիրուն,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ժամ է փեսային գալոյ,  
Երգեցէ՛ք զերգըս սիրոյ  
Վասն ցնծութեան մերոյ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Իջեալ փեսան առ նոսին,  
Տեսեալ և ուրախ լինին  
Օրիորդք հարսնարանին,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Լուսափայլ ամպ ես թեթև,  
Հեղեր ի յերկիր անձրև,  
Ետ մեզ զանազան պարգև,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Խորան կազմեցար լուսոյ,  
Դու ոսկի բուրվառ խընկոյ,  
Քիմք ես հաւատոյ մերոյ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ծառ արմատենի ծաղկեալ,  
Ի տանն աստուծոյ տընկեալ,  
Պըտող քաղցրահամ բերեալ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Կընդրուկ և զըմուռ հալուէ,  
Անճառ հոտ ի քէն քուրէ,  
Նիթ քո ի կենաց ծառէ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Հոռ քո զանազան ծաղկանց,  
Գուն առեալ յարեգականց,  
Զիս արա՛ լուսաթափանց,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Զայն տուր ինձ, ո՛վ տարփալի,  
Մարմինս իմ նուաղեալ մաշի,  
Սիրով ծարաւիժ յոգի,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ղամբար վառեալ լուսաւոր,  
Խորհուրդ ծնընդեան քո խոր,  
Աքանջելի չըքնաղ և նոր,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Մոխ և ճառագայթ թազմիս,  
Ընդ դասս անմարմնոց հրճուիս,  
Փրկեա՛ ի հըրոյն զհոգիս,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Մաքուր աղանի, տատրակ,  
Սիրամարգ ոսկէտեսակ,  
Գարնան անտեանց գուշակ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Յակինթ, դաճանակ գունով,  
Սարդիոն, լասպիս լուսով,  
Շափիրդայ, զըմբուխտ գեղով,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Նրոնենեաց ծաղիկ պայծառ,  
Պըտղոյն անմահին դու ծառ,  
Ծընար գմիածինն անճառ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ծնորփօք սուրբ հոգոյն ամբիժ  
Դու տախտակ աստուածագիժ,  
Գուշակեալ մարգարէից,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ուրախ լիցուք մեք ի քեզ,  
Ողորթին սիրեաց ըզքեզ,  
Կենաց հոտ բուրեալ առ մեզ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Զըքնաղ վայելուչ մարմնով,  
Լըցեալ մեծագին իղով,  
Զիս հաստատեացես լուսով,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Պապակիմ առ քեզ, յոգի,  
Հոտ իղոց ի քէն բուրի,  
Հոգիս իմ խանդաղատի,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ջրհոր կենդանի ջրոյ,  
Զպասքեալ ծարաւս արբո՛,  
Զթըմբեալս ի մեղաց զարթո՛,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ռահին լուսեղէն բացող,  
Յառագաստ երկնից բազմող,  
Մեզ ողորմութեան տըրող,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Սիրալիր պըտողըն Յիսուս  
Ի քէն կթեցաւ, սուրբ կոյս,  
Մեզ միշտ բարեխօս և յոյս,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Վարդ ես, տիրուհի, ծաղկեալ,  
Պըտող ի ժամու տըրեալ,  
Զհացն որ ի յերկնից իջեալ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Տունկ յանմահական դրախտէն  
Բուսեալ ծաղկեցաւ ի քէն,  
Զմայլեալ արբեցոյց զամէն,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Րամեալ հոտ ծաղկանց բուրեալ  
Յանթառամ ծաղկէդ առեալ  
Դու ի յարփենից վառեալ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Յընձա՛ բերկրալի շըքեղ,  
Լուսին ընդ ոտիք տըգեղ,  
Զգեցար զարեգակն անեղ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Իիծեալ բնութենէս թափուր  
Միայն ընտրեցար մաքուր,  
Ընկա՛լ զաղաչանս և լո՛ւր,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Փառօք զարդարեալ պըճնին  
Օրիորդք հարսնարանին,  
Զերդ ըզբուրաստան ծաղկին,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Քընար քաղցրախօս (հընչեն,  
Յերգս և ի խընճոյս պարեն,  
Օրհնութիւնս կուսին երգեն,  
Տաճար լուսոյ մայր և կոյս:

## 14

### ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ

Տապանակ կազմեալ անփուտ,  
Կըտակին փառաց անսուտ,  
Ընտրեալդ ի թիրուց դու զուտ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Էլեալ հոտ անճառելի,  
Խընկեալ բորվառ էտ ոսկի,  
Հորն աստուած ի քեզ վառի,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ռոտմամբ պաղատիմ կուսիդ,  
Վասն իմ աղաչեա զորդիդ,  
Որ ես հրեղէն արփիդ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Պրեալ մակագիծ կըտակ,  
Սափոր մանանին ունակ,  
Բըխեալ յԵդեմայ վըտակ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Րաբունոյն Եդեմ ծաղկած,  
Մեզ պատճառ եղեր կենաց,  
Լըցեր զԵսայեան առածն,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ի յերկրաւորաց նիւթոց,  
Թափանցիկ լուսոյն օթոց,  
Զհորըն ծըրարեալ ի ծոց,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Պառազան Ահարոնին  
Ծաղկեցաւ ի խորանին,  
Քուշակէր ըզճնունդ քոյին,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ուրախ եղև մայրն Եւայ՝  
Անմարմինըն մարմնանայ,  
Զխաւար մեղացըն քառնայ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Րախացիր, Ադամ, հայր մեր,  
Փըտեալ հընացեալ դու ծեր,  
Քեզ նոր նորոգող եկեր,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Ի յերկինս առեալ դասէ,  
Զգերեալքն ի սատանայէ,  
Ծընեալն յանարատ կուսէ,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Սոսկալի աւուր մեծին  
Լեր մեզ բարեխօս կրկին,  
Անարատ աստուածածին,  
Տաճար լուսոյ մայր սուրբ կոյս:

Էկեալ առ ձեզ պաղատի  
Գրիգորիսն Աղթամարցի,  
Ասացէք մեզ ողորմի,  
Կրկին ձեզ պարգևեցի:

## ՏԱՂ ԱՂԹԱՄԱՐՅՈՒ ԱՍԱՅԵԱԼ Է

Արեգակն արդարութեան  
 Բացաւ մեզ դուռն ողորմութեան,  
 Գերագոյն քան զբնութիւն,  
 Դիմեալ երթամք յԵրուսաղէմ.  
 Երջանիկ հօր միածին(ն),  
 Զարհուրեցոյց զպահապանս,  
 Էական աստուածութեան  
 Ընտրեաց զիր սուրբ զառաքեալսն,  
 Թուլացան չար խորհրդով,  
 Ժողովեցան աստուածասպանքն.  
 Ինքըն է տէր, ինքն արարող:  
 Լոեալ չխօսէր առ Պիղատոս.  
 Խորհրդոց ոչ խտորումն  
 Ծառայապէս կատարեցին,  
 Կատարեցան կամքն արարչին.  
 Հիսունք բերին փայտ կոփեցին,  
 Զնեցին խաչանըման,  
 Դամբար փայլած ջահ վառեցին,  
 Ծըմլեցաւ տէրն ի խաչին,  
 Մատունքն ի փայտ բնեռեցին,  
 Յիննէրորդ ժամ ուրբաթին  
 Նա աւանդեաց առ հայր զհոգին:  
 Ծուրջը պատեցին ըզԳողգոթայն  
 Ողորմելի ազգն հրէից.  
 Զհանդուրծեալ վարագորիւն

Պատանեցաւ վերուստ ի վայր  
Զուր և արին ի սուրբ կողէն  
Ռահ գործեաց զարդարութիւն:  
Սուրբ խնկով, սուրբ կտաւով,  
Վարշամակով պատանելով,  
Տարեալ դրին աւագ բեմին  
Ռարունեաց սուրբ վարդապետն,  
Ցնծացաւ Երուսաղէմ  
Ի հաւատացեալքն ուրախացան:  
Փառք ընդհանուր և սուրբ հոգւոյն  
Քրիստոսի տուք օրհնութիւն:

16

**Ի ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՂԹԱՄԱՐՑԻՈՅ  
ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ**

Քովեմ ըզբեզ, մարմնով հրեշտակ,  
Բարի արմատ՝ սուրբ յիշատակ,  
Յորթոյն կեանաց տունկ բարունակ,  
Ի գնացրս ջուրց հոգւոյն վրտակ:

Րամեալ ստեղունք ոստ ճախարակ,  
Բողբոջախիտ երփնագունակ,  
Ոսկէճաճանչ վարսագիսակ,  
Խայծեալ ողկոյզ, համ քաղցրունակ:

Իբրը խընձոր մի ի ճըղի,  
Գունագեղեալ ազգի ազգի,  
Տերևապատ քօղեալ ծածկի,  
Հոտն ի նմանէ արտարորի:

Գունով ես դու պըտող բարի,  
Ծառ քո ի դրախտն որ յԱդէնի,  
Ադէնն է մերս եկեղեցի,  
Որ ի հոգւոյն առոգանի:

Որակն անուըն հասակի,  
Որ յենթակայն տեղակալի,  
Տերնն է զգեստ պատմունանի,  
Պատշաճաւոր ըստ կըրօնի:

Բարո՛ւն, համբաւ գործոյդ բարի,  
Որ ոչ թաքչի ընդ գըրուանի,  
Կամ հոտ անոյշ ըստ Պաղոսի,  
Բուրեալ ի փառքս Քրիստոսի:

Իսկ մուտն ի քեզ մահկանացոի,  
Որ և երկուքըն շաղկապի,  
Անտի և ելն է անմահի,  
Լուծեալ կապիմք անլուծելի:

Սիրով քո սիրտս իմ տոչորի,  
Նուաղեալ մարմինս այլագունի,  
Կամ տարակոյս յայսմ աշխարհի,  
Ծըփամ յալիս մեղաց ծովի:

**ՆՈՐԻՆ**  
**ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՅԵԱԼ**

Դու եւ յԱդինայ դրախտէն,  
Զոր տընկեալ աջն անեղական,  
Կենաց ծառ ծաղկեալ եւ դու.  
Վարսաւոր սրովքէն պահապան:

Անծոր և անծեր եւ դու,  
Անթարշամ եւ ւ անապական,  
Թըմրեալ արքեցայ յոգի,  
Զի բուրեւ փոտ անմահութեան:

Հոտ քո է անճառ ծաղկանց,  
Մառագայթ եւ արեգական,  
Առ իս տեսանեմ ըզքեզ,  
Նա ծաղկին որպէս ըզշուշան:

Ի սէր քո վառին անշէջ,  
Նըւաղին առ քոյդ տեսութեան,  
Պասքեալ ծարաւին փոզով  
Սոսկալի և յոյժ հրաշագան:

Արարած եւ արարչին,  
Հըրանհիւթքն են քեզ պահապան.  
Օրհնեալ արարիչըն քո,  
Աքանչեկի պատկեր տիրական:

Տեսին անմարմինքն ըզքեզ  
Եւ ի գեղըդ քո հիացան,  
Ի քառից միթից կազմեալ  
Եւ ունիս հոգի բանական:

Արեգակն է քեզ նրման  
Կամ լուսինն ի հրնգէտասան,  
Մուշթարի, զօհրայ և շամս,  
Օտարիտ դէմ արեգական:

Կարմիր և կանաչ գունով,  
Երփնազարդ որպէս ծիածան,  
Դու ցօղ ես՝ իջեալ յամպէ,  
Զարդարես զերկիր հրաշագան:

Դրբախտ ես ծաղկածաւալ,  
Վայելուչ փրթթեալ բուրաստան,  
Կարմիր վարդ կանաչ թըփով,  
Համասփիտ և մուրտ ու շուշան:

Ի յեզր Փիսն գետոյն  
Բուսանիս հիրիկ անմման,  
Դէքըն սասանին ի քէն  
Եւ լինին յոյժ հալածական:

Նորասքանչ եղեգնախունկ  
Ի լեռնէն գաս սինէական,  
Ազնի և անուշահոտ  
Փարատես ըզցաւրս մարդկան:

Կինամոն ի Թէրայիոյ  
Գըտանի յոյժ հիացական,  
Ծաղիկ զըմըոսեայ չքնադ  
Եւ զարմանալոյ է արժան:

Նախամարգարէն Մովսէս,  
Որ էառ յաստուծոյ հրաման,  
Բերեալ եղ անուշ եփեաց  
Եւ էօժ զառաջին խորան:

Եղ թափեալ անուն Յիսուս,  
Որ էօժ զբնութիւնս մարդկան,  
Նա քեզ հովանի լինի  
Եւ պահէ ամբիժ ւ անասան:

18

### ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՏԵԱԼ

Արեգակնափայլ գեղով լի չուսին ի տասնութհնգէ,  
Աչեր ծով ի ծով ունիս, սուկալի վարսաւոր սըրովքէ.  
Ուներդ է քաշած կամար, զինչ զարնան աղեղն ի յամպէ,  
Լեզուդ տապարզի շաքար, քո շրթունքըդ վարդի թերթ է:

Աստղըն վառ ի վառ պայծառ ելանես ի յառաւօտէ,  
Սքանչելատեսիլ դիմօք, Միքայլէ հրեշտակն ես միթէ,  
Չըկայ օրինակ այլ քեզ, հողածին քան զքեզ չբերէ.  
Հազարաց բիրոց ընտրեալ, ո՞ր լեզու ըզքեզ դըրուատէ:

Վարդ եւ վայելուչ գունով, ցօղ առնուս ի վաղորդայնէ,  
Արեւն երբ ի քեզ առնու, հիանայ ով զքեզ տեսանէ:  
Հոտով քո արբեալ թըմրիմ, երբ քաղցրիկ հողմ ի քեզ հընչէ,  
Փընջեալ երփնազարդ ծաղիկ, զքեզ բերած ի բարձրը լեռնէ:

Հիրիկ, կինամոն, նարդոս, պալասան ի յԵգիպտոսէ,  
Քըրքում և զըմոտ շուշան, դու ազնի քան զգոհար հալուէ,  
Եղեգնախընկոց նմանիս, գըտանիս ի լեառըն Սինէ,  
Համասփիտ և մըրտենի, մանուշակ ի կանաչ թըփէ:

Ակըն դահանակ, սուտակ, էլեալ եւ Փիսոն գետէ,  
Տըպազ մեծագին, յասպիս, շափիւղայ, լոյսն ի քէն ցայտէ:  
Ակատ, կարկեհան, յակինթ, մարգարիտ՝ էլեալ ի ծովէ.  
Մաքուր, անարատ ոսկի, դու էլեալ եւ ի յԵւիլատէ:

Յապտած քարանց վիմաց մեծագին ակունք նորոգէ,  
Առեալ ի ցօղոյ յերկնից՝ ի յուտրէն մարգարիտ շինէ,  
Մացառաց, ոստոց, փշոց հոտ անուշ ըզվարդ ընձիւղէ,  
Կազմեալ ի ջըրոյ պատկեր է զարմանք թէ այսպէս առնէ:

Պատկեր եւ քո ստեղծողին, շաղկապեալ ի քառանիւթէ,  
Տիպն իւր գոյացոյց ըզքեզ, նըկարեաց ւ եհան յարգանդէ,  
Զիա՛րդ օրինակ տամ քեզ յանշնչից և յանըզգայէ,  
Յայս իմ այրեցած սրտէս զայս ընծայ ընկալ ւ ընդունէ:

Գրիգորիս Արթամարցի արտասուօք ըզքեզ կաղաչէ,  
Թէ՛ ինձ ողորմի ասցէք, և փրկիչն ձեզ պարզնէ:

## ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍՍՅԵԱԼ

Աստուածանըկար պատկեր յօրհնեալ ի յարարողէն,  
 Բանի քո բարդեալ դիզես զամենայն պարգևք հոգեղէն.  
 Գարուն գեղեցիկ եկեալ, հալածես ըզսառն ի ջրէն,  
 Դըրախտ վայելուչ ծառօք, փըթըթին ոստունքն ի ճըղէն:

Երկիր զարդարեալ բուօք, ընդունես ըզլոյսն յարևէն,  
 Զքեզ անպ հրաշագեղ ասեմ, ծըծես ցօղ անծայր ի ծովէն:  
 Է՛, դու մըշտարուխ աղբիր, արբենան արարածք ի քէն.  
 Ընտրեալդ ի բազմաց բարի, սովելոց տաս յանմահ հացէն:

- Թևօք քո թեթև թըռիր, զօրանաս յամենագօրէն.  
 Ժամանէ ի գիտութիւն ժըրաջան մեղուդ ի բընէն.  
 Ի լերունքդ ի ներս շըրջիս, ժողովես զփոշին ի ծաղկէն.  
 Լուսափայլ դամբար կազմես, քաղցրահամ կերակուրն ի քէն:

Խըտըղտայ Տիգրիս ւ Եփրատ զովացո գերկիր համօրէն.  
 Ծաղիկ ծիածան գունով, վայելուչ ու շաղն ի վերէն:  
 Կանաչ բարունակ տընկեալ քերկրութեան բաժակ ի յորթէն.  
 Համասփիտ ծաղկի նմանիս կամ փըթթեալ վարդն ի կոկոնէն:

Զազըդ արծըլոյ ձայնէ, բարձրացիր և ել ի հաւէն,  
 Դօղեալ հալածին թըռչունք, գերդ զհնուոր ի թագաւորէն.  
 Ծանանչ ի յարփոյն առնուս և վառիս անաղօտ լուսէն.  
 Մաքուր մարգարիտ պայծառ, ծընեալ ես յերկնային ցօղէն:

Յոսկոյն ես արաբացոց՝ արձակես նըշոյլ հրեղէն.  
Նարդոս և քրքում զըմտոս և հալուէ ի հընդկականէն.  
Շարեալ պաղպաջուն ակունք, կայծ կարմիր ի Փիտոն գետէն,  
Ոսկեակ, յակինթ և ակառ, կարկեհան քիրեղ սառնօրէն:

Զքնաղ վայելուչ տըպագ, զքեզ գովել չկարէ հողեղէն.  
Պատուական մաքուր արծաթ և սրբեալ անօթ լուսեղէն:  
Զահըդ վառ ի վառ անշէջ, փարատես զխաւարն ի տանէն,  
Ռամիցըս գըլուխ զինուոր, զօրանաս ի գօրավարէն:

Սարդ և սօս, կիպար և նոճ, տապանակ ի յանփոտ փայտէն,  
Վարսաւոր ծառըդ կենաց, զքեզ պահէ սուկալի սրովբէն.  
Տուն իմաստութեան շինեալ ի յահեղ հըզօրի բազկէն,  
Րամեալ խընամես գազինս և թափես ի չար գազանէն:

Յանկամ տեսանէլ ըզքեզ, իմ պըսակ փառաց լուսեղէն:  
Իիսեցից երգըս տաղիս, զքեզ գովեմ հոմերոսօրէն:  
Փափագիմ վարուցդ ամբիծ, տէր Անտոն ի Թերաչիդէն.  
Քո արարողին տամ փառք, օրհնութիւն յաիտեանս ամէն:

## 20

### ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՅԵԱԼ

Դու դրախտ Եդեմայ տընկեալ լանեղէն,  
Ի յեյս արևու տեղիք լուսեղէն,  
Ծառօք ու ծաղկօք պըտողովք շողեղէն,  
Զոր շրջափակեալ պահէ սերովբէն:

Որպէս զնախաստեղծըն գեղաղէշ ես,  
Տիպ և գաղափար տեսնն աստուծոյ ես,  
Պատկերով պատուեալ քան զՄիքայէլ ես,  
Ի հողեղիմացքս հըրեղէն ես:

Թափանցիկ լուսով ակըն արևու,  
Լիալիր լուսին մեղմով գընաս դու,  
Աստղդ վառ ի վառ, ցօղ առաւօտու  
Եւ անտաքեր հողմըն հարաւու:

Լեառըն Սարարադ, Կարմեղ և Սինա,  
Թաքոր 'ի Ահերմոն նման Բեթելայ,  
Զօհի Սրանդէլ և փոռ քէմիայ<sup>1</sup>,  
Ով ի քեզ դիմէ շուտ փարթամանայ:

Վըտակ Եղեմայ և գետ Յորդանան,  
Սելովմայ աղբիր և ջուր ես յուզման,  
Անկեալ եմ հիւանդ մերձ առ քոյդ դրան,  
Սպասեմ հանապազ ես առողջութեան:

Փայլուն մարգարիտ ի մէջ սադաֆին,  
Յահագնատեսիլ յատակըս ծովին,  
Զոր գաս ի ցամաք ձեռօք լողնորդին,  
Եաղութ ու զըմրութ, գոհար մեծագին:

Վերնոց վեհագոյն և աշխարհի զարդ,  
Ուշիմ և խոհեմ 'ի անօրինակ մարդ.

---

<sup>1</sup> Լեռն եւ Սրանդէլ, ի քիմիայով (իմա՝ հարստութեամբ — ա.)

Յոճի, մրտենի, սանտալի և սարդ,  
Նումանի ծաղիկ և փըթըթեալ վարդ:

Յարեայ շըրջեցայ ի մէջ գիշերոյս,  
Խընդրեցի գտայ զիմ աչացըս լոյս.  
Եկ իմ գեղեցիկ քրքում և նարդոս,  
Ոչ թողից ըզքեզ մօտ ի տուն գինոյս:

Կեփագայ ոսկի և մաքուր արծաթ,  
Վարսօք վայելուչ որպէս ըզթուխ սաթ,  
Ով որ տեսնէ, դառնայ մաղասկաթ,  
Անդուլ 'ի անդադար կու առնէ ֆըրեաթ:

Է՛ մահի թամամ, դըրհանի թանկթար,  
Է՛ քաման արբու, սարմաստի նիզար<sup>2</sup>:  
Երբ ի կան ածես զաչերըդ կամկար,  
Սըրտեր փոցատես համարով հազար:

Սամպուլ 'ի ըռայհան, լալա ու կուզար,  
Պըլպուլ գուանդա ամատ բա բահար,  
Նալա ու ֆիղան մէքունաթ սահար.  
Պաշաթ քի պինամ ըոռուի տիլտար<sup>3</sup>:

---

<sup>2</sup> Ո՛վ լիպուսին, նեղքերան,

Ո՛վ աղեղնաճոնք, սիրածին հարբեցնող (պ.):

<sup>3</sup> Մմբուլ ու ռեհան, կակաչ ու ծաղկունք,

Երգիչ տխակը եկավ զարնան հետ,

Ողբ ու կոծ է անում (մինչև) առավոտ,

Թերևս տեսնես դեմքը սիրածիս (պ.):

Նարինջի ծաղիկ, կալիսի տերև,  
Դու վարսաւորեալ յարմաւենոյ ձև,  
Փայլըս փայլի տաս սիրամարգու թև,  
Խնդրութեան տեղիք, աշացըս լոյս քև:

Հոտըդ քո բուրե վարդ ու շուշանի,  
Մուշկ և մանուշակ, հովիտ ծաղկալի,  
Նարգիզ, նոնոֆար, բըլուր կընդըրկի,  
Ամենայն մըտաց եւ ախորժելի:

Դու սքանչելագործ քան զօրաւոր խաչ,  
Ահաւոր տեսեամք քան ըզկարի քաջ,  
Ելանես, գընաս, և լինիմ յառաջ,  
Կամ լիսուհի ընդ իս, կամ նստիք ի յաջ:

Գիշեր ու ցորեկ եմ եւ երեքուն,  
Ոչ կենամ ի դուրս 'ի ոչ օթիմ ի տուն,  
Սահրա մեզարդամ համչու Մաջընուն,  
Իմոզամ Ֆըրհատ, դիլի ման փուռ խուն<sup>4</sup>:

Զարկած ի վերեդ քեզ կանաչ վըրան,  
Բազմիս ահաւոր, 'ի եւ քեզ յանդիման,  
Ծօխշանգ շաքարի, ըոո արդաւան,  
Է՛ լ(ա)պ աղիղի ու դուռի դանդան<sup>5</sup>:

---

<sup>4</sup> Քափառում եմ անապատում հանց Մեջնուն,  
Այսօր Ֆարհատն եմ, սիրտս լի արշուն (պ.):

<sup>5</sup> Ծողշողուն շաքար եւ, կարմրադեմ (եւ),  
Ո՛վ սարդիոն շրթունք ու մարգարտե ատամ (պ.):

Սիրտը փափագի և կայ ի դողման,  
Աչերս է կարօտ տեսող անըման,  
Սէ ըռուզ բուրիմ փէշի թու մեհման,  
Մտանջ, մէրաւամ, սարվարի խորան<sup>6</sup>:

Ջիարդ բաժանիմ ի քէն կենդանի,  
Առանց քո տեսող շունչըս կու քաղի,  
Չուն թարկ բրդահամ, գուլի խօշբուի,  
Գար քինամ՝ հազար ջար ու սրթամի<sup>7</sup>:

Արհնութիւն փըրկչին ի քեզ իջանի,  
Կամօքն աստուածային կենաս կենդանի,  
Գունդըք չար այսոցն ի քէն հալածի,  
Ջերդ ըզարեգակն փայլես ի յերկրի:

Է՞ր ունայնաբանես, Աղթամարցի,  
Այս կեանքս անցաւոր է՝ քեզ յուշ լիցի,  
Այժմ յօժարութեամբ ես մեղաց գերի,  
Բայց յետոյ լինիս ողորմ ու լալի:

---

<sup>6</sup> Երեք օր քեզ մտս հյուր էի,

Մի տխրիք, գնում եմ, գեղեցկութիւնների գլխավոր (ալ.):

<sup>7</sup> Երբ թողնեմ (քեզ), վարդ ես բուրավետ,

Թե տեսնեմ՝ հազար բռնություն ու դաժանություն ես (ալ.):

## ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՅԵԱԼ

Դու ես արեգակ, լուսին ի լրման,  
 Չկայ քեզ օրինակ ի յորդիս մարդկան,  
 Պաշաթ քի շաի Իսուֆի Քանհան,  
 Է՛՛ ևօտասիդայ կուլի քա պօտտան՛:

Պայծառ արուսեակ ի յառաւօտու,  
 Ես եմ քեզ փափագ, ւ յիսնէ ես հեռու,  
 Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդըն դու,  
 Չըրա՞ դէր ամատի, քեմարամ քէ թու՞:

Սախտեալ գեղեցիկ, ոսկի մէտրասայ,  
 Մէհրապ է քաշած զուներդ ի նըմա,  
 Աչերդ է կանթեղ ի ներքոյ նորա,  
 Կարդան անդադար անդ քալամուլլահ:

Դու քեթըլմամուր և մաքաթուլլահ<sup>3</sup>,  
 Գամ յայդ հեռաւոր ճանպահոյ որ քեզ կայ,  
 Պըստանամ թազպէհ, բփուշամ խրդայ<sup>4</sup>,  
 Լիցի թէ աչերս քեզ արծանանայ:

<sup>1</sup> Թերևս լինես Հոփսեի Քանանացին,

Ո՛վ դու պարտեզի նորահաս ծաղիկ (պ.):

<sup>2</sup> Ինչո՞ւ ուշ եկար, հիվանդ եմ առանց քեզ (պ.):

<sup>3</sup> Դու քեթըլմամուր և Մեքքե աստծու (պ.):

<sup>4</sup> Թազպեհ՝ ձեռք քերես, հազնեմ՝ քուրճ (պ.):

Իմ սիւն ի սրտի ւ իմ ուրախութիւն,  
Իմ շունչ ու հոգի ւ իմ կենդանութիւն,  
Աչացս առաջի եւ քուն ւ ի յարթուն,  
Տուշմանի թորայ շաւաղ ճիկարխուն<sup>5</sup>:

Նորարոյս ծաղիկ և տունկ նշենի,  
Երեսդ է պայծառ քան ըզթերթ վարդի,  
Է՛ ամպարֆըշան հուրի ու փարի<sup>6</sup>,  
ԶՀինդ ու զԽորասան քո մէկ տեսդ արծի:

Օրթունքդ է շաքար, խօսանքդդ դանտ է,  
Լեզուդ ի քերանդ անգին ճօհար է,  
Համապիտ ծաղկի հոտ ի քէն բուրէ,  
Զէ քեզ օրինակ, քոյդ այլ փարթամ է:

Ուներդ է քաման, թարթաւիդ է քո թիր,  
Զանգ աստ, ու լաշքար մէքունի թատպիր<sup>7</sup>,  
Թըրով ու սրով շատ ոք խոցեցիր,  
Զե՛հ հուքմ ու հրաման, զեհէ՛ սախթադիլ<sup>8</sup>:

Առիւծ ի շամբի բազկօք զօրաւոր,  
Ամէն կենդանեաց եւ դու թագաւոր,  
Երբ աղաղակես ձայնիդ ահաւոր,  
Սարսափեն, դողան երէքդդ բոլոր:

---

<sup>5</sup> Թող քո թշնամու սիրտը արունուտի (պ.):

<sup>6</sup> Ո՛վ համպարաբուխ հուրի ու փերի (պ.):

<sup>7</sup> Պատերազմ է, ու բանակ եւ պատրաստում (պ.):

<sup>8</sup> Ի՛նչ ուժ ու հրաման, ի՛նչ դաժանություն (պ.):

Կարմիր-սպիտակ խնձոր անտառին,  
Ծըրար ըստաշխից և իղ մեծագին,  
Վազելով գնաս ի վերայ լերին՝  
Նըման այծեմանց և որթուց եղին:

Բերկրութեան բաժակ և սպի հայաթ,  
Ես եմ ծարսեալ, արթո՛ ինձ մին կաթ,  
Պըթ փիալէ ու շիրին շարպաթ,  
Մուրդա զընդա քուն, դարի քարամաթ<sup>9</sup>:

Քան ըզքաջ արծի բարձրագնաց ես,  
Գեղեցիկ բազայ, լատիֆ ու թառ ես,  
Փայլուն սիրամարգ ոսկէփետուր ես,  
Քաղցրաձայն կաքաւ մըրդի սահար ես:

Սուրաթդ է սադաֆ մարգարտաքրտունք,  
Է՛ փուստայ տըհան<sup>10</sup> ու բարակ շրթունք,  
Սուտակ, դահանակ ու շարեալ ակունք,  
Բիրեղ քանդակեալ մատունք ւ ատամունք:

Քան զգարնանային ամպ քաղցրահոսան  
Վայելուչ գունով զերդ ըզծիածան,  
Հողմով տարբերի քո հերըդ դեղձան,  
Երբ որ ելանես սահրայ ի սէլրան:

Կիպարի, Աոճի, կանաչ ձիթենի,  
Նարինջ ու թուրինջ, տունկ պալասանի,

<sup>9</sup> Տուր (ինձ) փիալէ ու քաղցր օշարակ,  
Կլանք տուր մեռչալին, ով հրաշագործ (այ.):

<sup>10</sup> Ո՛վ պիստակաբերան... (այ.):

Տօսախ, սինուբար, շմշատ ու տուքի,  
Միշտ կանաչ կենաս քան զնշարենի:

Զօրըն կու մաշիմ ի հոգս և ի դուսայ,  
Վախեն թէ լինիմ ի քեզնէ ճուտա,  
Կամ զիս մոռանաս ու տաս ինձ ճազայ  
Պութիմ խիրաթմանդ, քարդի դիւանայ<sup>11</sup>:

Նոր գարուն եղև և նոր առաւօտ,  
Նօ պուպուլ ամատ, դումրի ու հօտհօտ<sup>12</sup>,  
Նոր ձայն արձակեց, նոր նստաւ ի մօտ,  
Նօ կու ու սամպուլ ես էի կարոտ:

Հեռացաւ գընաց յինէն տրտմութիւն,  
Եկն եհաս այսօր ինձ ուրախութիւն,  
Ելլ փափագ չունիմ, իմ փափագըն դուն,  
Քաղի լոյս աչացըն քո թշնամուն:

Քեզ միշտ հովանի քանըն հայրական,  
Միքայէլ հրեշտակըն քեզ պահապան,  
Յաշխարհըս կենաս անփորձ և անասան,  
Անմեղ, անարատ և անապական:

Ա՛յ Աղթամարցի՛ դու ծառայ մեղաց,  
Աւորքըդ գընաց ահա ի ձեռաց,  
Զգաստացիր հիմիկ և կաց ի յոտաց,  
Լալով աղաչէ զՔրիստոս աստուած:

<sup>11</sup> Իմաստուն էինք, դարձրիր խելագար (պ.):

<sup>12</sup> Նոր սոխակ նկավ, տատրակ ու հոպոպ (պ.):

## ՏԱՂ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՏԵԱԼ

Մաքուր պատկերով նրման հրեշտակի,  
Անգին մարգարիտ յետեալ ընդ ոսկի.  
Սէթ՝ ի Աքիսողոմ, Յովսէփ սքիւրալի,  
Անձամբ վայելուչ ի մէջ ամենի:

Է՛ դօննայ տրիսան, ծաղիկ նրոնենի,  
Պըտողով բարունակ և դալար ուռի:  
Դու քաղցըրհայեաց փրթթեալ վարդենի,  
Արմաւ և շուշան և նըշդարենի:

Ուներդ է քաշած քան ըզթափած թուր,  
Թարթափդ է քո թեք քան ըզնշտար սուր,  
Սպանանես, գերես յօրըն հազար քիր,  
Զե՛հ հուսնու սուրաթ ու գեհե՛ սամպուլ<sup>1</sup>:

Դու նազուք տայուս և մըրդի թութակ,  
Կարկաշող կաքաւ, գարնան ծիծեռնակ.  
Պուլպուլ ու դումրի՝ լատիֆ ու գիրաք,  
Հօտհօտի սաքայ և փէքար մալաք<sup>2</sup>:

Ոսկի ի Հընդկաց, ակըն պատուական,  
Շուրջ գամ ու փընտրեն ըզբեզ անխափան.

<sup>1</sup> Ի՛նչ բարի երես ու ի՛նչ սմբուլ (պ.):

<sup>2</sup> Սոխակ ու տատրակ՝ քնքուչ ու ճարպիկ,  
Այգարացի հոպոպ և պատկեր հրեշտակի (պ.):

Ես եմ քեզ խընդրող և վաճառական,  
Ի քազում մըտաց ծածուկ՝ ի անկուման:

Նայեաց մէկ ընդ իս աչօքդ մէտսան,  
Կամ քաղցրիկ խօսիր կամ տուր պատասխան.  
Ծիկարում քէպապ, կօզում եաշի դան,  
Կէճայ ու կունտուզ դըլարըմ ֆըղան՝:

Արբի ու սահարսան, ուզուն նուր ու նար.  
Թօքար աղզընտան նօպաթ ու շաքար<sup>4</sup>,  
Յով որ դու նայիս և առնես նատար  
Լիճի քան ըզմոմ՝ պողպատ է թէ քար:

Սիրով լափեցիր՝ ի արիր զսիրտըս խոց,  
Կու տապիմ՝ ի այրիմ որպէս ի հընոց.  
Սըրտէս կու թափի յոլով հուր ու բոց,  
Զայդ աստուածագիծ պատկերդ քո ինձ ցոյց:

Քո մէջքդ է քարակ քան զուռի վարոց,  
Սպիտակ ատամունք՝ մարգարտէ շարոց,  
Դու քաղցրատեսիլ և պըտուղ ծառոց,  
Յայդ շիրին լեզուէդ տուր երկու զըրոյց:

Քան զշամբ եղեգան ելեր ես շիտակ,  
Ուներդ է կամար որպէս զաղեղնակ.

<sup>3</sup> Սիրտն իմ այրված, արցունքս է հոսում,

Գիշեր ու ցերեկ ողբում եմ ես (թ.):

<sup>4</sup> Առավոտ ու այգաբաց ես, դեմքդ հուրհրան.

Թափվում է քերամիցո նաբաթ ու շաքար (թ.):

Աչերդ է պայծառ որպէս ըզծովակ,  
Ղարդ եղայ ի ներս 'ի եղէ անճարակ:

Թարթափդ է խանչար, ինքըն՝ պողպատ զուտ,  
Այտով զիս հարիր 'ի արիր խուրտ ու մուրտ.  
Ամպի պէս ածիր ինձ սաստիկ կարկուտ,  
Թէ ես մեռանիմ, քեզ շահ չէ, օգուտ:

Երթունքըդ է քո լար, կըլափդ է ամպար,  
Տաշխ և կինամոն նաֆայի թաթար.  
Զմնոտ և հալվէ ու լալ ու ճօհար,  
Զօհրայ, մուշթարի 'ի արուսեակ պայծառ:

Վեր ես գընացեր քան ըզսինոբար,  
Նըռնենի դըրախտ և սալվի չինար,  
Լեզուդ է շիրին քան զՄըսրի շաքար,  
Ի քո թըշնամոյն շինքըն տապար:

Քան զգարնանային մանուշակ հոտով,  
Որպէս քաֆուր վարդ պայծառ և գունով.  
Ծագիս քան զարև յերկնից կամարով,  
Զերդ ըզբոլորեալ լուսին ես լուսով:

Երբ որ կու շարժիս ոտօքդ ըռաւան,  
Որ որ դադարիս, այն տեղն է պօստան.  
Հանց սիասաթով իջնուս քան ըզխան,  
Դըրիր ըզգերիս զընձի 'ի ի զընտան:

Խն Աղթամարցի՝ դու քարեաց անջան,  
Ոնայն թըզենի, փշաքեր անդաստան.

Թո՛ղ զսէր աշխարհիս այս անցորական,  
Զի դառն ու լեղի է յոյժ անպիտան:

Անօրէնութիւնքդ քո բարձրացան,  
Որպէս բեռն ծանր սաստիկ ծանրացան.  
Երբ որ մըտանես ի հող 'ի ի տապան,  
Ապա աւաղես, դառնաս փոշիման:

## 28

### ԱՂԹԱՄԱՐՅԻ ԳՐԻԳՈՐԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ԱՍԱՑԵԱԼ

Ահա այգիք մեր ծաղկեցան,  
Բուրեն ըզհոտն անմահութեան,  
Ե՛կ, ցանկալի իմ 'ի աննըման  
Եւ զուարճացուք ի բուրաստան:

Բըխեն ըստինքդ կաթն և գինի,  
Մեղր ի շրթանցդ քո կաթի,  
Որով հոգիս իմ փափագի  
Եւ նըւաղեալ յոյժ տոչորի:

Գեղեցկագեղ, քաղցրաքարբառ,  
Սէր քո ունի խորհուրդ անճառ,  
Իմանալի արև պայծառ,  
Լուսաւորեա՛ զմիտս խաւար:

Գրախոս վայելուչ, ծառ պըտողաւոր,  
Քաղցրաճաշակ գինի և նոր,  
Սիրով արքեալ քո ահաւոր  
Ի սենեկին խորհըրդաւոր:

Երևեցան ծաղկունքն յերկրի,  
Նըստցուք ընդ քեզ ի պարտիզի,  
Երգեցից սէր քեզ սիրելի,  
Սիրտ իմ սիրով քո ոչ յագի:

Զօր հաճապագ ընդ քեզ կալով,  
Ըզգեղ դիմաց քո դիտելով  
Եւ խօսակից քեզ լինելով,  
Ըստեպ-ըստեպ համբոյր տալով:

Էթէ յաշաց մարմնոյս ծածկիս,  
Մըտաց աչօք ինձ երևիս.  
Բնակեալ ես դու յիմում սրտիս,  
Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգիս:

Ընտրեալ ոսկի սոփերական,  
Ակ լուսատու և կարկէհան,  
Տըպագ և կայծ յոյծ պատուական,  
Ելեալ խընդրեմ զքեզ անխափան:

Քէ տեսանեմ ըզքեզ կըրկին,  
Լուսաւորի միտքս իմ մըթին,  
Եւ տամ համբոյր շոթանց քոյին,  
Նա վերանամ ես ի յԱդին:

Թուժկալութիւն չունիմ անկամ,  
Զտի ու զգիշեր նըստեալ ողբամ,  
Վտեալ սիրով քո տապանամ,  
Զաչս ի յանհասըդ համբառնամ:

Ի տեսլենէ քո արբեցայ,  
Ահեղակերպ լուսոյ արքայ.  
Հոգիս քերկրեալ ընդ քեզ ցնծայ,  
Սիրով ի սէրըդ կապեցայ:

Լուսապայծառ երևի նա,  
Որթոց եղանց նըման խայտայ,  
Ահա եկեալ ի Թէմանայ,  
Զգետաւորեալ ի Բոսորայ:

Թունկ և հալուէ, ծաղիկ դաշտաց,  
Անճառելի հոտ քո բուրեաց,  
Ելից զաշխարհս համատարած,  
Յորմէ մարդիկ եղեն հարբած:

Ծաղիկ փրթթեալ առաւօտու,  
Չոգոյս, մարմնոյս իշխանըն դու-  
Լուսաբորբոք ակն արևու,  
Օդ քաղցրութեան ի հարաւու:

Կարմըրացեալ ի գոյն վարդի  
Ի մէջ ծաղկանց երևելի,  
Բարձրատողէշ արմատենի՛,  
Գլխոյս իմոյ լն'ր հովանի:

Հոտ քո անուշ տարածեցան,  
Որպէս ըզվարդ և ըզուռան,  
Նարդոս, քրքում և պալասան.  
Քիմք մեր ի քէն պարարեցան:

Ձայն տուր և ինձ, ո՛վ տարփալի,  
Նուաղեալ հոգիս յոյժ ծարալի,  
Մարմինս մաշեալ այլագունի  
Վասն տեսեան քո սրխրալի:

Ղամբարափայլ ճաճանչ լուսո՛յ.  
Յիս վառեցեր ըզկայծ սիրոյ.  
Սիրտ իմ արթուն կայ վասն քո,  
Ոչ դադարի ակս ի լալոյ:

Ճեմեալ ընդ քեզ ի յանդաստան,  
Փափագով քո սուրբ տեսեան՝  
Ահեղակերպ և հրաշագան,  
Աչք մեր ի քէն նրաղեցան:

Մաքուր մարմնով մարգարտափայլ  
Ահեղատես լուսոյ նրկար,  
Ի հազարաց բիրոց ընտրեալ,  
Մըտեր ի սիրոսս իմ թագնաբար:

Յորժամ ի քէն լինիմ հեռի,  
Սիրոսս իմ սիրով քո հըրդեհի.  
Ջերդ գեղջերուն, որ փափագի,  
Յաղբերըս ջուրց միշտ յօժարի:

Նըստեալ ի յանց ճանապարհին  
Վըտակ ի յաչացս իջանի.  
Արտասուօք զանկողինս թացի.  
Դարձիր առ իս, ո՛վ սիրելի:

Երթունք քո սուրբ թէ շարժեացես,  
Նուրբ և ծածուկ սիրով ազդես,  
Զանկեալս կրկին յարուցանես,  
Ամբիժ, մաքուր, անարատ, հեզ:

Ո՛ր խնդրեցից զքեզ ցանկալի.  
Մի և ընտրեալ քոյն ծնօղի.  
Ծընօտքն քո նըման տաշխի,  
Զքիսս իմ էլից յանկարծակի:

Զունիմ հանգիստ գերդ հրակիզած,  
Կամ վարանեալ և դեգերած,  
Ռոպէս մոլի եմ և արբած,  
Քեզ փափագիմ, պըսա՛կ փառաց:

Պարտեզ փակեալ շուրջանակի,  
Աղբեր կընքեալ ջրոյն կենդանի.  
Նըստեալ ի բլուրըն կընդըրկի  
Լիբանանէ եկ, սիրելի՛:

Զահո՞ վառեալ ի Սանիրայ,  
Զայն քո եկեալ յԱհերմոնայ,  
Լերանց ընծուց դիմեալ և գայ,  
Մեղր ի ներքոյ լեզուի քո կայ:

Ռընկունք լցան մեր ի հոտոյ,  
Քոր և հեղեր նրման իւղոյ.  
Նարդոս, քրքում, ծաղիկ ծառոյ,  
Եղեգն և խունկ, լեառըն գմրոսոյ:

Սէր քո գսիրտս իմ տոչորէ,  
Անշէջ վառեալ բոցակիզէ,  
Զքունն ի յաչաց իմ թօթափէ  
Մէջ գիշերի՝ առաւօտէ:

Վայելչագեղ, ծաղկածաւալ,  
Զերդ սերովքէ վարսաւորեալ,  
Քան ըզլուսին ես լըրացեալ,  
Խաւարելոյս արև պայծառ:

Տոր ինձ ըզձայն քո ազդելով,  
Զի խանդակաթ եմ ես սիրով.  
Գլուխ քո լցեալ մանրիկ ցօղով,  
Աչք քո ծաւալ տան գերդ ըզծով:

Րոտեալ սիրով քո ըղձալի  
Զձայն քո արա ինձ լսելի.  
Դարձի՛ր, դարձի՛ր, դա՛րձ սոմնացի,  
Դարձեալ բնակեա՛ յիմում սըրտի:

Ցանկամ գեղոյ քո գերունակ,  
Հեզ և հանդարտ, ամբիժ տատրակ.  
Որախութեան իմոյ գուշակ,  
Զոր երկրաւորքս չեն օրինակ:

Իհսեաւ և զիս ի քեզ սիրով,  
Կամ ու սպասեմ այսու յուսով  
Եւ հառաչեմ արտասուելով,  
Թէ նորոգես կրկին մարդով:

Փեսայ և տէր իմոյ հոգոյս,  
Յոյժ հեռացար վասն իմ գործոյս.  
Նոր միացիր ընդ մեռելոյս  
Եւ այց արա կորուսելոյս:

Քեզ գովութիւն յանարծաճես,  
Ընկալ զսակասս ի նրազէս,  
Ի յաղթատի գանձարանէս.  
Տուր զշնորհաց ձիրըն պէս-պէս:

## 24

### ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ

Գարունն երեկ պըլպուլն յայգին,  
Ծաղկունքն ամէն շատըխ արին  
Եւ մուշթուլովս տարան վարդին,  
Թ'ելեր կու գայ քո սիրելին:

Րախացեալ պլպուլ հաւին  
Ընդ կանաչել վարդին թըփին,  
Գընաց պլպուլն երեր զղումրին,  
Թէ՛ եկ և տես ըզելք վարդին:

Ի մէջ պաղշին վըրան զարկին,  
Ի ինքն էր ի քուն մէջ կոկոնին.  
Կանչեց պլպուլն ըզդազալին  
Ի ուրախացաւ ի տես վարդին:

Պիշեր ցորեկ կամ երերուն  
Եւ ես կայրիմ ի դէմ վարդուն.  
Թէ երբ ելնէ ինքն ի քընուն,  
Քանի՜ անեմ զար յիր սիրուն.

Ով սիրելիք իմ հաւասար,  
Թէ գիտէք դեղ՝ արեք ինձ ճար,  
Գընամ ի վարդն ի զէնէհար  
Եւ ծառայեմ սրտովս յօժար:

Բամբ թռչնոց, զձեզ մոռացայ,  
Յորժամ զքաֆուր վարդըն տեսայ.  
Ընդ անեղ գունըն հիացայ,  
Ի բուրմանէ հոտոյն արբայ:

Ի քէն հայցեմ, վա՛րդ պատուական,  
Մի՛ համարիր զիս անարժան,  
Կա՛մ սպասատր ի քոյդ դըրան,  
Մի՛ արձակեր զգերիս ունայն:

Սէր քո անեղ ւ անտանելի,  
Տըկար թռչունս զիս՛րդ լինի,  
Սիրտըս վառեալ հըրոյ վայրի,  
Թէ ինձ չառնես պատասխանի:

## ՆՈՐԻՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՍԱՏԵԱԼ

Յեռ գընալոյ վարդին եկ պլպուլն յայգին,  
 Ետես թափուր զվրանն, քաղեցաւ հոգին,  
 Խնդրէր և հարցանէր ըզիր սիրելին,  
 Կանչէր զար ու ֆիղան ի մէջ գիշերին:

Այգի՛, ընդ քեզ ասեմ, տուր ինձ պատասխան,  
 Ընդէ՛ր ոչ պահեցեր զվարդն իմ պատուական,  
 Որ է ամէն ծաղկանց սալվար ու սուլթան,  
 Գունուլըն գեղեցիկ հոտ անմահութեան:

Քակի քո ամուր պատդ, դառնաս ւտերակ,  
 Չորնա ճուղդ ու տերևդ ծառոցըդ շիտակ,  
 Ամէն ոտըն խաղա ի քեզ համարձակ,  
 Վերնա քու ու քանճար ամէն կանաչ տակ:

Ակո՛ւնք յորդախաղացք, մի՛ գնայք առաջ,  
 Ծառե՛ր, թօթափեցէ՛ք զտերև ձեր կանաչ,  
 Խօսիմ պարզ և յիտակ, ասեմ անամաչ,  
 Քանզի տարան յինէն զսիրելին իմ քաջ:

Ձիմ վարդն ի քէն տարան ւ արին զիս շիար,  
 Առին ըզլոյս աչացըս, տիրեաց ինձ խաւար,  
 Ըզտիւ և ըզգիշեր ողբամ անդադար,  
 Դարձեր եմ մաղասկաթ և չունիմ դըրար:

Ղինի թէ այգեգործն արար-գայս ընդ իս,  
Տարեալ ըզվարդըն յինէն ցաւեցոյց զհոգիս.  
Այլ զնա ոչ տեսանեմ զինչ լինամ գերիս,  
Փոխան ուրախութեան, ողբ ասեմ վարդիս:

Վախեմ հողմըն սաստիկ ելաւ ահագին,  
Վասն այն թօթափեցաւ տերևըն վարդին,  
Եւ կամ խորշակահար տապըն արևին  
Եհար թարշամեցոյց ըզգեղըն քոյին:

Կարծեմ եթէ ծաղկունքն արին հետ ինձ քէն,  
Տարեալ հեռացուցին ըզվարդըն յինէն,  
Եւ կամ կարկուտ եկաւ սաստիկ ամպեղէն,  
Եհար զնա անողորմ, կտրեաց ի թըփէն:

Ծաղկունքն ամէն ասեմ նորա միաբան,  
Եթէ քընաւ չունիմք ի վարդէն կուման,  
Մեզնէ քեզ թասալլու է հազար տաստան  
Ազ մա նազահ ուրի սրոյ ու փինհան<sup>1</sup>:

Պլպուլըն վերացաւ ի յօթըն թևով,  
Ասաց թէ հարցանեմ թոչնոցըն սիրով,  
Եթէ գիտեն նոքա, ասեմ ինձ փութով,  
Թէ չէ հանեմ յաչացս արտասուք քան զծով:

Թոչո՛ւնք, այսօր գիտե՛ք, թէ զինչ գործեցաւ,  
Զի վարդըն վայելուչ յայգոյն վերացաւ,

---

<sup>1</sup> Մեզնից համկարծ զնաց գաղտնի ու ծածուկ (այ.):

Միթէ տեսել էք դուք, լսել էք համբաւ  
Կամ գողըն գողացաւ կամ զի՞նչ տիրեցաւ:

Ասէն թէ՛ արարիչ տէրըն գիտակ է,  
Ասէն ծածուկ սրտի նա տեսանող է,  
Քո վարդըն չենք տեսեր, աստուած վկայ է,  
Գընա, շրջիր յայլ տեղ և զնա որոնէ:

Պլպուլն դառնացաւ, ասաց՝ Ջինչ լինիմ,  
Գիշերն մինչև ի լոյս մըտօք ես տանջիմ,  
Վախեմ առանց վարդին յանկարծ մեռանիմ,  
Կարօտով բաժանեալ ի հողն իջանիմ:

Թէ զարարածս ամէն վարդին փոխան տան,  
Նա ինձ անարգ թըրի՛ ոչինչ, անպիտան  
Կամ դասս երգեցողաց երածըշտական  
Քաղցրիկ եղանակէն, ինձ գուժ է և գան:

Ո՛ր տարան, վա՛րդ, ըզբեզ կամ ո՛ր թաքուցին,  
Ջիարդ մոռանամ ես ըզսէրըն քոյին,  
Խոցեցաւ սիրտս ու լերդըս կըսկծագին,  
Ծաղկունքըն հաւասար այսօր թառամին:

Իմ կեանքս է գէմ երագ, ես՝ յերերմնի  
Եւ լոյսն արեգական ինձ խաւար թըրի,  
Դիժար և դառնութեամբ արուրքս անցանի,  
Որ և ի թիւ կեանցս իմ ոչ անկանի:

Վարդէն բաժանեցայ ողորմ ու լալի  
Եւ բան մարգարէին առ իս կատարի,

Քանզի հաւալասան եմ յանապատի,  
Եղէ եւ որպէս բու ի յաւերակի:

Եկեալ այգեգործին մըխիթարեաց զնա,  
Ասաց՝ Մի լար, պլպուլ, քո վարդըն կուգայ,  
Եկեալ է մանուշակ վարդին փիատայ,  
Թուրայ խապար ամատ՝ սալամ ու տօվայ<sup>2</sup>.

Իսկոյն ուրախացեալ և օրհնեաց ըզնա՝  
Խաղաղութեամբ կենաս յաշխարհիս վերայ,  
Այգի քո փըթըթի, ծաղկունք ի նմա,  
Պարիսպըն նորոզի՝ ՚ի ի մէջն բրքայ:

Ամէն արմատ և ճուղքըն դալարանան,  
Առնուն շաղ ի յամպէն և պայծառանան,  
Ծարծին քաղցրիկ հողմով վայելուչ շուշան՝  
Եւ հոտըս տարածեն ի քիմըս մարդկան:

Ստեալ տարան զնամակն ի դուռն վարդին,  
Հագրէվարդին դիմաց կարդացող բերին.  
Կանգնաւ ի վերայ ոտաց և թուղթն ի յափին,  
Ընթերցաւ բարձրաձայն ի լուր ամենին:

«Քեզ ողջոյն գրեմ ես, սրտով սիրելի  
Եւ հարցանեմ յանձնէդ, ով երանելի,  
Յուսամ ես առ աստուածն ամենայնի,  
Որ նանարատ մարմնով ես դու կենդանի»:

---

<sup>2</sup> Քեզ լուր եկավ, ողջոյն ու մաղթանք (պ.):

Զօրըն բազկատարած կամ ի յաղօթի՝  
Խնդրեմ ի յաստուծոյ քո կեանքն յերկարի  
Եւ աջն անեղական լինի հովանի,  
Ներքին և արտաքին չարն ի քէն փախչի:

Ծաղկանցն ամենայնի գլուխըն դու ես,  
Որպէս զարքայ և տէր ամենի տիրես,  
Գունովդ վայելուչ, հոտովդ անուշ ես,  
Յամէն առաւօտու քան զարև փայլես:

Շրանի այն պահուն, որ տեսանեմ զքեզ,  
Զի դու ես բընութեամբ անարատ և հեզ,  
Խոնարհաբար հեռուստ երկրպագեմ քեզ  
Եւ ըզդարձ քո խընդրեմ, քաղցրացի՛ր առ մեզ:

Թէ զիմ ըզգաստութիւնըս հարցանես դու,  
Չունիմ խելք ու բասար՝ ի ոչ իմաստութիւն,  
Չառնում դուր և դադար և ոչ շինեմ բուն,  
Նադարամ թաղաթ, նա եք մըսխալ խուն<sup>3</sup>:

Զի առանց քո տեսող եմ ես երերուն,  
Գիշերըն քուն չի գար, այլ կենամ յարթուն,  
Նեղեալ և փըղձըկիմ, երբ լինի գարուն,  
Հալեր եմ ու մաշեր ի քո կարօտուն<sup>3</sup>:

Վարդըն պատասխանի նորա թըղթուն տայ,  
Ասաց՝ Բազում ծաղկունք առաքեմ առ նա,

<sup>3</sup> Չունեմ զորություն, ոչ մեկ մսխալ արյուն (պ.):

Որ զարդարեն լերինք, դաշտք, զամեն սահրայ,  
Ի հոն ուրախութեամբ պուլպուլըն կենայ:

Ինձ գնալու ատեն այլ անպատեհ է,  
Պլպուլըն սակաւիկ միթէ համբերէ,  
Թէ կատարեալ իր սերն ի հետ վարդին է,  
Ասցէք թէ ի դրախտն ըզնա որոնէ:

Ուրախացաւ պլպուլն ընդ ասել քանին.  
Ասաց թէ՛ Աւետիք ինձ այսօր բերին.  
Զիմ գեղեցիկ ըզվարդս ալվի ինձ բերին,  
Զէ արարածս ամեն կարմիր վարդին գին:

Յորժամ արնն ի խոյն եկեալ ժամանեաց,  
Ամպ ի վերուստ ի վայր յանկարծ որոտաց,  
Բուսան ծաղկունք լերկրի և ազգըս ազգաց,  
Վարդըն չէր ի միջին, պլպուլն որոնեաց:

Յետոյ տեսաւ զկանաչ տերևըն վարդին  
Այլ պատուական պայծառ որպէս առաջին,  
Վարդն էր կարմիր զգեցեալ որպէս ծիրանին,  
Ծաղկունքն հաւասար երկըրպագեցին:

Պլպուլըն զայն տեսաւ սասց. Գոհութիւն,  
Յամենայն բերանոյ օրհնաբանութիւն,  
Թագաւորին երկնից փառաբանութիւն,  
Տեսայ աչօք ըզվարդն ի մէջ թըլիերին:

Յիմար Աղթամարցի, գիւելքըդ ժողովէ,  
Զի սէրն այս աշխարհիս հաւսար փոշի է,  
Փառք և ուրախութիւնս այս անցատր է,  
Կենացըս կայ վճար, քանզի երազ է:

## 26

### ՏԱՂ ԳԱՐԵԱՆ ԱՂԹԱՄԱՐՅՈՅ

Գարունն է բացվեր վարդն ի պաղշանին,  
Քաղցր եղանակեն պլպուլն ու դումրիին,  
Սիրով են վառեալ ի կարմիր թըլիին,  
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին:

Գիճով եմ, գիճով, ցորեկս արևով,  
Գիճով եմ, գիճով, գիշերս երազով:

Է՛ շամս ու դամար աստղ առաւօտին,  
Պայծառ արեգակըն լուսով ի լին,  
Լալ ակն ու գոհար ես դու մեծագին,  
Ծիրանի ծաղիկ, գոյն մանուշակին:

Գիճով եմ, գիճով, ցորեկս արևով,  
Գիճով եմ, գիճով, գիշերս երազով:

Դու նշդարենի ծաղիկ շուշանի,  
Դու կանաչ բըրբայ ի մէջ շուկային,  
Քաղաքն Խորթան ու Չինումային,  
Խորասան բոլոր չէ՛ քո տեսոյդ գին:

Գիճով եմ, գիճով, ցորեկս արևով,  
Գիճով եմ, գիճով, գիշերս երազով:

Մոմեղէն մատուցք, հոտ պալասանքին,  
Դու նուշ ու շաքար, տուփ անուշ խընկին,  
Դու կարմիր խնձոր ի մէջ տերևին,  
Ծաղկեալ բուրաստան և ցօղ արևին:

Գինով եմ, գինով, ցորեկս արևով,  
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Մարգարիտ պայծառ ես դու մեծագին,  
Ակամբ զարդարեալ ի յոսկի սէնին,  
Նունուֆար ծաղիկ, գոյն ըռահանին,  
Մուրտ և բալասան, փափուկ շուշանին:

Գինով եմ, գինով, ցորեկս արևով,  
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Համապիտո ծաղիկ ես բուրաստանին,  
Բրաքիոն պայծառ ի յԱդին դրախտին,  
Զօհալ մուշթարին, աստղ առաւօտին,  
Զօհրայ յուսաբեր, դամար ու յուսին:

Գինով եմ, գինով, ցորեկս արևով,  
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Ծամս և արեգակն երկնային զընդին,  
Թոխ ամպիդ, նման ցօղեւ անձրևին  
Ծառ կանաչտերև՝ դու պտղով ի լին,  
Բողբոջեալ ծաղկով ոստ արմատենին:

Գինով եմ, գինով, ցորեկս արևով,  
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Կըճորուկ և զըմուռ, խունկ ընդ հալուեին,  
Քաղցր և ախորժակ համով շաքարին,  
Ի յամէն դիհաց բքխէ ձեզ բարին  
Եւ ձեզ հովանի նշան սուրբ խաչին:  
Գիճով եմ, գիճով, ցորեկս արևով,  
Գիճով եմ, գիճով, գիշերս երազով:

Պահապան լինի աջըն հայրենին  
Եւ փրկէ զձեզ ի շար վըտանգին:  
Գիճով եմ, գիճով, ցորեկս արևով,  
Գիճով եմ, գիճով, գիշերս երազով:

## 27

### ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱՇԷՆ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻ ՈՒՆԵՑՈՂԻ ԵՒ ԼԱԼՈՒ

Յամէն առաւօտ և լոյս  
Գաբրիէլն ասէր հոգոյս.  
«Արի՛, ե՛լ ի յայս այգոյս»,  
Այս իմ նորատունկ այգոյս:

Քար եմ քերէր սարերոյս,  
Փուշ եմ կրէր ձորերոյս.  
Պատ եմ բոլորէր այգոյս,  
Կասեն՝ թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Ինչպէ՛ս ելնեմ ի յայգոյս,  
Գէմ չար փուշ կայ պատերոյս:  
Ջոր եմ քերեր լեռներոյս,  
Աղբիւր եմ շիներ այգոյս,  
Դեռ չեմ խըմեր ի ջրոյս,  
Կասեմ, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Ուր եմ տընկեր այս այգոյս,  
Ջտակն եմ ջրեր այս տընկոյս,  
Դեռ չեմ կերեր ի պըտողոյս,  
Կասեմ, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:  
Այս իմ [նորատունկ այգոյս]:

Հընձան եմ շիներ այգոյս,  
Կարաս եմ թաղեր գինոյս,  
Դեռ չեմ խմեր ի գինոյս,  
Կասեմ, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:  
Այս իմ նորաշէն տներ[ոյս]:

Տուն եմ շիներ մէջ այգոյս,  
Ոսկով նաշխած չարտըխնուս,  
Դեռ չեմ վայլեր շենքերոյս,  
Կասեմ, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:  
Այս իմ [նորաշէն տներոյս]:

Վարդ եմ տնկեր այս այգոյս,  
Կարմիր 'ի ըսպիտակ վարդոյս,  
Դեռ չեմ գիտուն առեր զվարդոյս,  
Կասեմ, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:

Ծաղիկ եմ տընկեր այգոյս,  
Կանաչ ու դեղին ծաղկոյս,  
Ռեռ չեմ գիտուն առներ ծաղկոյս,  
Կասեն, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»:  
Այս [իմ նորաշէն տներոյս]:

Գաբրիէլն եկաւ հոգոյս,  
Յահէն կապեցաւ լեզուս,  
Խարաւ աչերս ի լալոյս,  
Աւա՛ղ իմ կարճ արևուս,  
Կասեն, թ' [«Արեկ, ել այգոյս»]:

Առին գհոգիս ի մարմնոյս,  
Հանեցին զիս յիմ այգոյս,  
Մահ է, որ ելնեմ այգոյս,  
Այս իմ նորաշէն տներոյս:

Ուորն կանաչ է այգոյս,  
Որթն բացեալ է տընկոյս,  
Խաղողն գոյնըզգոյն այգոյս,  
Ծառեր-տունկըն շատ՝ այգոյս,  
Կաս[են, թ' «Արե՛կ, ե՛լ այգոյս»]:

Պուլպուլըն կանչէ այգոյս  
Առաւօտէն մինչ ի լոյս,  
Յօղն իջանէ ի յայգոյս  
Յամէն առաւօտ և լոյս:



# Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

## ՆՄԱԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հանգուցյալ գրականագետ Մայիս Ավդալբեգյանը ներկա ժողովածուն կազմել է Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործությունների իր իսկ աշխատասիրությամբ լույս ընծայված քննական-Քամեմատական Քրատարակության (Երևան, 1963) Քիմնական բնագրերից: Իսկ այդ Քրատարակության լուրաքանչյուր բնագիրը պատրաստելու Քամար, ինչպես արձանագրել է Մ. Ավդալբեգյանը, «իբրև սկզբունք Քիմք է ընդունվել մեկ ձեռագիր. մյուսները Քամեմատվել են Քիմնական բնագրի Քեռտարբերությունները Աշված են տողատակին» (էջ 102): Հիմնական բնագիր այդ «մեկ ձեռագիրը» որպես կանոն եղել է ամենաՔիմ թվակիր գրչությունը: Սա Աշանակում է, որ սույն գրքի մեջ գետեղված տաղերը Աերկայացված են ձեռագրական մեկ տարբերակի ընձեռած տվյալներով, դրա գրչական որոշ աղճատումներով Քանդերձ:

Հաշվի առնելով մասսայական ընթերցողի պահանջները և ի Քարգանս Մ. Ավդալբեգյանի Քիշատակի, գիրքը խմբագրելիս, այդ աղճատումները Ավազագույնի Քասցնելի մտադրությամբ՝ Քարկ Քամարվեց կատարել Քեռելյալ անՔրածեշտ փոփոխությունները.

ա) Վերականգնված է «Քանձ Ուռնկարու սուրբ Աշանին» ստեղծագործության տների կրկնակը, որ քննական Քրատարակության մեջ Աշված էր սոսկ «Երկրպա.» Քամառոտագրությամբ:

բ) Ելնելով կոնկրետ տաղերի Քանգավորման, տաղաչափական և այլ առանձնաՔատկություններից, Քիմք ունենալով քննական Քրատարակության տարբերակային առավել ճշգրիտ ընթերցումները՝ ուղղվել են այն մի քանի շեղումները, որոնք Քաստատապես գրչական ընդմի-

Ջարկություններ ու աղճատումներ են և շատ հեռու՝ հեղինակային ձևեր  
լինելու հավանականություննից:

գ) Ժողովածուն համալրվել է թուրքերեն ու պարսկերեն տողերի  
թարգմանություններով, որոնք բերվել են ըստ Հ. Աճառյանի և Բ. Չու-  
գասյանի վերծանումների:

դ) Սակավ դեպքերում վերանայվել է կետադրությունը:

**Վ. Ն եր ս ի ս յ ա զ**

## ԲԱՌԱՐԱՆ\*

Ալէճ— գիտուն, գիտնական, ուսյալ

Ամբէր— տե՛ս ամպար

Ամպար— մածուցիկ բուրումնավետ օծանելիք

Ազըղ— սիրահար

Ապի հայաթ— կենդանության ջուր, անմահական ջուր

Բասար— խելք, բանականություն

Բըռքայ— տե՛ս բրքայ

Բրկա— տե՛ս բրքայ

Բրքայ— լճակ, ավազան

Դրախա— ծառ, պարտեզ

Եաղութ— տե՛ս յաղութ

Զար— ողբ ու կոծ

Զէնէհար— պաշտպանություն, ապահովություն, փրկություն, ապաստան

Զըմպուկ— տե՛ս սիմպիկ

Զընճիլ— շղթա

Զնտան— բանտ, զնդան

Զօհալ— Երևակ մոլորակը

Զօհրայ— Արուսյակ մոլորակը

Ըոահ— տե՛ս ոահ

Ըոանկ— տե՛ս ոանկ

---

\* Բառարանը կազմել է Բ. Լ. Չուգասզյանը:

Քան — թագ

Քան — դալար, փափուկ, թարմ, թաց, խոնավ

Քասալլու — մխիթարանք

Քիր — նետ

Քուրիճ — տե՛ս թուրիճ

Քուրիճ — նարնջի մի տեսակ

Լալ — թանկարժեք կարմիր քար, սուտակ, կարկեճան

Լատիֆ — վայելուչ, քնքուշ, փափուկ

Խամար — տե՛ս դամար

Խանչար — դաշույն

Խուրտ — մանր, փոքրիկ

Խուրտ ու մուրտ — ջարդ ու փշուր

Կան ու պէկան — ժամանակ ու անժամանակ, ժամ ու անժամ

Կամկար — կամակար, փափագիճ հասնող, երջանիկ, բախտավոր, անձ-  
միշխան

Կուլ — վարդ, ծաղիկ

Կուման — կարծիք, կասկած

Հազար — տե՛ս հազերի

Հազար տաստան — սոխակ

Հազրէվարդ — ծաղկի անուն

Հազերի — պատրաստակամ, ներկայություն

Հազրի — տե՛ս հազերի

Հայիֆ — ափսոս, ավաղ

Հասրաթ — տրտմություն, կարոտ, փափագ, տենչանք

Ղազալ — սիրերգ, տաղ, գազել

Ղալատ — սխալ, սխալանք

Ղալմուղ — կալմիկերեն

Ղամար — լուսին

Ղանտ — շաքար, ալլաբանորեն՝ քաղցր

Յ Գրիգորիս Աղթամարցի — 118 —

Ղարդ լինել — ջրասույզ լինել, խեղդվել

Ղըրար — հանգիստ, դադար

Ղումրի — տատրակ

Ղուսայ — վիշտ, մտատանջություն

Ղօճնայտըհան — կոկոնաբերան

Ճագայ — պատիժ

Ճուտայ — անջատ, զատ, ջոկ

Ճօհար — գոհար

Մարճան — բուստ՝ ծովային բույս, որ քարի պես է

Մէհրապ — հեթանոսական տաճարի, հետագայում ցան մզկիթի ավագ սեղանը, կամարակապ որմնախորշը, որտեղ կանգնում և աղոթում են

Մըրդի սահար — առավույամ թռչում՝ աքաղաղ, սոխակ, տատրակ

Մըրդ — տե՛ս մըրդի սահար

Մէստան — հարբած, գինով

Մէտրասայ — դպրոց, ուսումնարան

Մուշթարի — Լուսնթագ մոլորակը

Մուշթուլիս — ուրախ լուր, ավետիս

Մուշկ — օժանելիք, որ ստացվում է այծյամի պորտից

Մուրտ — տե՛ս խուրտ ու մուրտ

Մուրտ — անթառամ ու հոտավետ մի ծառ

Յադուք — հակինթ

Յատապ — տանջանք, չարչարանք, պատիժ

Յիսա — Հիսուս

Նատար — հայացք, ակնարկ

Նատար առնել — աչքով տալ

Նաֆայ — մուշկի պատիճը՝ մշկայծյամի հոտավետ պորտը

Նաֆայի թաթար — թաթարական նաֆա (տե՛ս)

Ներկիզ — նարգիզ, նարկիս

Նուման — կակաչ, հարսնուկ

Նօ — մոր

**Շահ պլպուլ**— սոխակների թագավոր

**Շամս**— արև, արեգակ

**Շատլըխ**— ուրախություն

**Շարապ**— խմիչք, գինի

**Շէմս**— տե՛ս շամս

**Շէքեր**— շաքար

**Շիրին**— քաղցր, ամուշ

**Շմշատ**— տոսախի ծառ կամ թուփ

**Տրաղ-որաղ**— թերթ առ թերթ

**Չարտըխ**— չարդախ, քառասուն շինվածք

**Չինար**— սոսի

**Չինի**— հախճապակի

**Պաղչա**— փոքր պարտեզ

**Պէկաֆ**— տե՛ս կաֆ ու պէկաֆ

**Պէհալ**— ամուծ, թույլ, անտրամադիր

**Պէուշ**— ուշաթափ

**Պրքայ**— տե՛ս բրքայ

**Պօստան**— պարտեզ, ծաղկամոց, բուրաստան

**Ջօհար**— տե՛ս ճօհար

**Քահ**— ճանապարհ, ուղի

**Քահան**— տե՛ս ռէհան

**Քանկ**— գույն, երանգ

**Քաւան**— սահուն, ընթացող

**Քաւանդ**— գաբի, ունանդ, խավրժիլ

**Քէհան**— շահասպրամ

**Սադաֆ**— գաղտակարա, մարգարտի խնցի

**Սալվար**— գլխավոր, հրամանատար, վեհապետ

**Սալվի**— նոճի, կիպարիս

**Սախտեալ**— պատրաստված, կառուցված

**Սահրա**— դաշտ, անապատ

Յ°

— 115 —

**Մանտպի**— ճանդամ, սանդալ ծառը, որ հոտափետ փայտ ունի  
**Մապահ**— առավոտ, արշալույս  
**Մապապ**— պատճառ, առիթ  
**Մար**— գլուխ, զագաթ  
**Մարդ (սադր)**— ծառի անուն  
**Մէնի**— մատուցարան, ափսե  
**Մէլվի**— տե՛ս սալվի  
**Մէյրան**— պտույտ, զրոսանք  
**Միասաթ**— դիվանագիտություն, բանիմացություն  
**Միճուրբար**— բարդիի մի տեսակ, իտալական սոճի  
**Միմպիլ**— հակիհնթ, ճարդոս, ցորենի հասկ  
**Մուշ**— հանցանք, մեղք  
**Մուրաթ**— դեմք, երես

**Տայու**— սիրամարգ  
**Տապարզի**— բյուրեղ շաքար՝ սպիտակ, շատ քաղցր  
**Տըհան**— բերան. տե՛ս փուստատղհան և դոճնայտղհան  
**Տուրի**— իբր արքայության կամ դրախտի ծառերից մեկի անունը  
**Տուշ**— քուն ու երազ

●**արտա**— վարագույր, քող, ծածկոց, շղարշ  
●**եղամպար**— պատգամաբեր, մարգարե  
●**իատայ**— հետիոտն  
●**ուստա**— պիստակ  
●**ուստատղհան**— պիստակաբերան

**Հալամուլլահ**— աստծու խոսքը՝ դուրան  
**Համան**— աղեղ  
**Հաֆուր**— աստծուն ուրացող, անհավատ

**Շտարիտ**— Փայլածու մուրակը

**Ֆըղան**— ողբ, կոծ, աղաղակ  
**Ֆըրեաթ**— աղմուկ, ողբ, վայնասուն  
**Ֆիղան**— տե՛ս ֆըղան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Գրիգորիս Աղթամարցի—Մայիս Ավդայեզյան** . . . . . **5**

**Ց ա ղ է ր**

1. Տաղ Գրիգորիսի Աղթամարցոյ է—Եղուկ ու Քազար մի վայ	16
2. Ի Գրիգորիս Աղթամարցոյ արարեալ ոտանաւոր զվարս Մարինոսի ճգնաւորիցն—Անծիցն և անըսկիզբն է հայրն երկնային	18
3. Տաղ Աստուածատուր Խաթայեցուն ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ—Վաճառական մի հայ և յոյժ ճարտասան	28
4. Տաղ Աստուածատուր Խաթայեցոյն—Գովենք ըզվկայն արի	34
5. Տաղ վարդին և պլպուին ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ ասացեալ—Ծաղկունքն ասեմ' Հերիք արա . . .	35
6. Գանձ Ռոշընկարու սուրբ ճշանցիցն—Գերակատար աստուած համայնի	42
7. Մեղեդի ազնի—Խոստովանիմք զՄիածին . . . . .	50
8. Նորիցն Գրիգորիսի Աղթամարցոյ ասացեալ—Մարմինս ըզոգիս զրկէ . . . . .	54
9. Ի Գրիգորիս կաթողիկոսէ—Գանգատ առնեմ սիրով քեզ	55
10. Տաղ անուշ—Այբէն մինչև ի Քէն քենէ զանգատիմ ես . . .	57
11. Ի Գրիգորէ Աղթամարցոյ զովասանութիւն Յովսէփ վարդապետի—Գովեալ սուրբ հայր ոմն յարակայ . . . . .	59
12. Տաղ Աստուածածնիցն յԱղթամարցի Գրիգորիսէ ասացեալ—Անեղին տաճար . . . . .	60

13. Տաղ սուրբ Աստուածածինն ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ ասացեալ— Արքային փակեալ պարտեզ . . . . .	62
14. Ըստ անուան երգողին ի Գրիգորիս կաթողիկոսէ— Տապաւանկ կազմեալ անփուտ . . . . .	68
15. Տաղ Աղթամարցու ասացեալ է— Արեգակն արդարութեամ . . . . .	71
16. Ի Գրիգորիս կաթողիկոսէ Աղթամարցոյ ըստ անուան երգողին— Գովեն ըզքեզ մարմնով հրեշտակ . . . . .	72
17. Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— Դու ես լԱղինայ դրախտէն . . . . .	74
18. Նորին Գրիգորիսի ասացեալ— Արեգակնափայլ գեղով լի լուին ի տասնութընգէ . . . . .	76
19. Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— Աստուածանըկար պատկեր յօրինեալ ի յարարողէն . . . . .	78
20. Նորին Գրիգորիսի ասացեալ— Դու դրախտ Եդեմայ տընկեալ յանեղէն . . . . .	79
21. Նորին Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— Դու ես արեգակ, լուսին ի լրման . . . . .	84
22. Տաղ Գրիգորիս կաթողիկոսի ասացեալ— մաքուր պատկերով նըման հրեշտակի . . . . .	88
23. Աղթամարցի Գրիգորիս կաթողիկոսէ ասացեալ— Ահա այգիք մեր ծաղկեցան . . . . .	91
24. Նորին Գրիգորիսի ըստ անուան երգողին— Գարունն երեկ պլլպուլն յայգին . . . . .	97
25. Նորին Գրիգորիսի ասացեալ— Յետ գընալոյ վարդին եկ պլպուլն յայգին . . . . .	99
26. Տաղ գարնան Աղթամարցոյ— Գարունն է քացկեր վարդն ի պաղչանին . . . . .	105
27. Տաղ ի վերայ նորաշէն տուն և այգի ունեցողի և լալու— Յամէն առաւօտ և լոյս . . . . .	107

**Հ ա վ ե լ Վ ա ծ**

Խմբագրի կողմից . . . . .	110
Բառարան . . . . .	112

**«ՀԱՅ ԲՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ»**

**ՄԱՏԵՆԱԾԱՐ**

**Գրիգորիս Աղթամարցի**

**Ց ա ղ ե ր**

**Серия «АРМЯНСКАЯ  
КЛАССИЧЕСКАЯ ЛИРИКА»**

**Григорис Ахтамарци**

**Стихотворения**

**(На армянском языке)**

**Издательство «Советакан грох»**

**Ереван — 1984**

**Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան**

**Նկարիչ՝ Ն. Հ. Հակոբյան**

**Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան**

**Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Մանճապանյան**

**Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան**

ՊԵ 4533

Հանձնված է շարվածքի 22. 07. 83: Ստորագրված է տպագրության  
11. 01. 84: Ֆորմատ 70×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ՝  
«Նորք»: Տպագրություն՝ բարձր: 5,25 պայմ. տպ. մամ., 6,38 պայմ. ներկ.  
թերթ., 4,05 հրատ. մամ.: Գինը՝ 55 կոպ.: Պատվեր 1348: Տպաքանակ՝  
20000:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советская проза», Ереван-9, ул. Теряна, 91:

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի  
գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ-  
կոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегарпта Госкомитета по делам  
издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9,  
ул. Теряна, 91.